ԳԼՈԲՈՒՄ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀԱՐԶԱԿՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿԱՅՔԵՐԻ ՎՐԱ

ՀՐԵԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԻՑ

16

Հոկտեմբեր, 2007

«ՆՈՐԱՎԱՆՔ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԳԼՈԲՈՒՍ
Վերլուծական տեղեկագիր

ГЛОБУС
Аналитический бюллетень

№ 16 (24)
Հոկտեմբեր, 2007թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Արևմտահայության 3-րդ համագումարի
կազմակերպման շուրջ *(ծառայողական)* 3

Արևմտյան Հայաստանի իրականության մասին 5

Թուրքիա. քաղաքականության փոփոխություն 8

Հայկական ՀԿ-ներն աջակցում են Ջ.Սորոսի ծրագրերին 14

Усиление курдского фактора и Армения 16

ԱՄՆ հրեական կառույցները և նրանց դիրքորոշումը
Մեծ Եղեռնի հարցի նկատմամբ 19

Միջազգային կոնֆերանս՝ նվիրված էներգետիկ
անվտանգության հարցերին *(ծառայողական)* 22

Ադրբեջանի նավթային սեկտորը
սպառնում է երկրի տնտեսությանը 25

Արդարություն և զարգացում կուսակցության
իսլամական հենարանը 27

Իսլամական արմատականության
ակտիվացում Լիբանանում 30

ԱՄՆ ՀՀՊ համակարգը. հարավկովկասյան հեռանկարներ 33

ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ 3-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՇՈՒՐՋ

Սեպտեմբերի 21-25-ը Փարիզում տեղի ունեցավ Չոպանյան ինստիտուտի կողմից հրավիրված «Կոչ՝ հասցեագրված Հայկական ցեղասպանությունը վերապրածներին» պաշտոնական անվանումը կրող սեմինարը, որն իրականում Արևմտահայության 3-րդ համագումարի կազմակերպումը նախաձեռնող խմբի հերթական հանդիպումն էր: Խնդրին նվիրված գիտական քննարկման ընթացքում ՀՀ-ից ելույթներ ունեցան Վահան Մելիքյանը (Սլավոնական համալսարանի ամբիոնի վարիչ), Ռուբեն Սաֆրաստյանը (ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի տնօրեն) և Գագիկ Հարությունյանը («Նորավանք» հիմնադրամի տնօրեն):

Համառոտ նախապատմություն. Ինչպես հայտնի է, 1917 և 1919 թվականներին տեղի են ունեցել Արևմտահայության 1-ին և 2-րդ համագումարները (Երևան), իսկ 1919 և 1920թթ.՝ 1-ին և 2-րդ Հայ ազգային համագումարները (Փարիզ): Հետագայում, նախորդ դարի 70-ական թվականներին, վերապատվելի Ջեյմս Կառնուզյանը փորձ կատարեց շարունակել այդ ավանդույթը և երկու անգամ հրավիրեց հայկական համագումարներ, որոնք բովանդակային առումով պետք է հանդիսանային արևմտահայության ազգային համագումարների իրավահաջորդները: Սակայն այդ միջոցառումները որևէ իրական արդյունք չտվեցին, և Կառնուզյանը դադարեցրեց գործունեությունն այդ ուղղությամբ:

Սփյուռքահայության միավորման և Արևմտյան Հայաստանի կառավարություն կազմելու գաղափարները վերակենդանացան 90-ականների սկզբին, որի արդյունքում թեման սկսեց արծարծվել հանրությունում և մամուլում: Սակայն այլ, գործնական բնույթի զարգացումներ այդ ուղղությամբ չհետևեցին:

Վերջին տարիներին այդ գաղափարին սկսել է հետամուտ լինել Կարեն Միքայելյանը (Մոսկվա, նախկինում ՀՀ Սփյուռքահայության կոմիտեի նախագահի տեղակալ, հետագայում՝ Ռուսաստանի հայերի միության նախագահի տեղակալ, ներկայումս՝ հասարակական գործիչ): Նկատենք, որ ՌՀՄ-ն 2002թ. իրավաբանորեն հիմնեց Համաշխարհային հայկական համագումար կազմակերպությունը, որը, սակայն, դեռևս լիարժեք չի գործում:

Խնդրի հրատապության շուրջ. Արևմտահայության համագումարի և Արևմտյան Հայաստանի վտարանդի կառավարության ձևավորումը ռազմավարական առումով ժամանակավրեպ չէ: Արդի Թուրքիան մասամբ ընդգրկված է Մերձավոր և Միջին Արևելքում (ՄՄԱ), այսպես կոչված, «ղեկավարվող քաոս» առաջացնելու ամերիկյան նեոպահպանողականների կողմից մշակված նախագծում: Այդ պետության նկատմամբ կիրառվում է Բեռնար Լյուիսի անունը կրող էթնիկ և դավանական տարանջատումների վրա հիմնված ամերիկյան պաշտոնական, դոկտրինալ բնույթ կրող ռազմավարությունը: Համաձայն այդ մոտեցման՝ մասնավորապես Մերձավոր և Միջին Արևելքի գրեթե բոլոր երկրները պետք է մասնատվեն բնակչության ազգային և կրոնական հատկանիշների հիման վրա և վերածվեն ոչ մեծ (և այդ պատճառով՝ դրսից դյուրին կառավարվող) պետական կառուցվածքների: Նման ռազմավարության նպատակն է.

- վերահսկելի դարձնել էներգակիրներով հարուստ այդ տարածաշրջանը,
- արգելակել իսլամական աշխարհի հզորացումը,
- անվտանգության լրացուցիչ երաշխիքներ տրամադրել Իսրայելին:

Այս ամենի կապակցությամբ տեղին է հիշել, որ որոշ գնահատականների համաձայն՝ Թուրքիայի բնակչության 30-40%-ը այլազգի են, և խոսքը միայն քրդերի մասին չէ, չնայած որ նրանք հիմնական ազգային փոքրամասնությունն են: Ինչպես հայտնի է, Թուրքիայում բնակվում են իրենց լեզուն և դավանանքը փոխած բազմաթիվ հայեր և հույներ, որոնց թիվը, համաձայն փորձագետների, հասնում է մի քանի միլիոնի: Հայտնի է նաև, որ այլադավան և այլալեզու հայերի և հույների հետ, նրանց «վերահսկելու» նպատակով, գործում են թուրքական հակահե-

տախուզական մարմինները: Դրանց հետ մրցակցում են արևմտյան, իսկ որոշ նախանշաններով՝ նաև այլ երկրների հատուկ ծառայությունները, որոնք նույնպես փորձում են իրենց ազդեցության տակ դնել Թուրքիայի ազգաբնակչության այդ հատվածը: Արդյունքում՝ Թուրքիայում նկատվում են ազգային խնդիրների հետ կապված հակասությունների սրացման միտումներ, որոնք պայմանավորված են ոչ միայն հայտնի քրդական գործոնով:

Ինչպես արդեն վերը նշել ենք, ամերիկյան ռազմավարությունը ՄՄԱ-ում ուղղված է նաև արմատական իսլամի դեմ: Նկատենք, որ ԱՄՆ-ում գործում են հետազոտական կենտրոններ, որոնց նպատակներից է նաև իսլամն ավելի հանդուրժողական դավանանքի վերածելու մեխանիզմների մշակումը: Այդ համատեքստում բնորոշ է 2001-2002թթ. ոչ արմատական իսլամական կուսակցությունների ձևավորումը, որոնք կրում էին նույն Արդարություն և զարգացում անունը և որոնք գրեթե միաժամանակ հաստատվեցին Թուրքիայում, Մարոկոյում և Բահրեյնում (այդ քաղաքական գործընթացը, համաձայն որոշ դիտարկումների, վերագրվում է ամերիկացիներին, իսկ որոշ աղբյուրներ նշում են նաև այդ տեխնոլոգիայի հեղինակին, այն տարիների ԱՄՆ ՊՆ փոխնախարար Փոլ Վուլֆովիցին, որը նեոպահպանողական ընտրանու ամենակարկառուն ներկայացուցիչներից մեկն է): Համաձայն ամերիկյան մոտեցումների, աշխարհիկ՝ քեմալիստական ավանդույթներ ունեցող Թուրքիայում հանդուրժողական իսլամիստների իշխանության գալը, մասնավորապես, պետք է հակազդի Իրանի՝ որպես իսլամական աշխարհի առաջատարի, ձևավորմանը: Պետք է նկատել, որ այս համատեքստում ամերիկյան ծրագրերում Թուրքիային փաստորեն վերագրվում է երկակի դերակատարում: Այդ տերությունը որոշակի հավասարակշռող գործոն պետք է դառնա իսլամական աշխարհում և մասնավորապես ՄՄԱ-ում, իսկ նրա ԵՄ-ին անդամագրումը պետք է արգելակի եվրոպական երկրների աշխարհաքաղաքական հենքի վրա միավորմանը:

Վերոնշյալ խիստ համառոտ թվարկված հանգամանքները, հաշվի առնելով «ղեկավարվող քաոս»-ի հենքում ընկած անորոշությունները և նեոպահպանողական նախագծերին բնորոշ հակասություններն ու ռիսկերը, զարգացման որոշ սցենարների պարագաներում (որոնք տեսականորեն չպետք է բացառել), կարող են հանգեցնել Թուրքիայի թուլացմանը և անգամ մասնատմանը: Հատկանշական է, որ արդեն իսկ որոշակի վերափոխումների են ենթարկվել Վաշինգտոն – Թել Ավիվ - Անկարա նախկինում ամուր դաշնակցային հարաբերությունները, փոխվել են նաև Թուրքիային տրվող աշխարհաքաղաքական գնահատականները:

Այս ամենի համատեքստում Արևմտյան Հայաստանի նկատմամբ պահանջատիրական լավ կազմակերպված կազմակերպության առկայությունը քաղաքական տեխնոլոգիաների տեսանկյունից կարող է և որոշակի դերակատարում ունենալ:

Նշենք, որ Արևմտահայության համագումարի ձևաչափի ստեղծումն ունի նաև որոշակի մարտավարական նշանակություն: Այն կարող է վերածվել մի նոր ցանցային կառույցի, որը կարող է ՀՀ իշխանությունների, Ամերիկայի Հայկական համագումարի և Հայ դատի գրասենյակների հետ կոորդինացված որոշակի գործողություններ իրագործել:

Ներկա գործընթացները. Առայսօր նախաձեռնող խումբը չունի նախագիծն իրականացնելու համար անհրաժեշտ նյութական և կադրային ռեսուրսներ: Խնդիրները շատ են նաև կազմակերպչական տեսանկյունից: Առայժմ չկան գրասենյակ, մշակված նախագիծ կամ աշխատանքային ժամանակացույց:

Հետևություններ. Ըստ մեզ՝ Արևմտահայության 3-րդ համագումարի կազմակերպման գործում հնարավոր է երկու մոտեցում.

- Գործընթացները պահպանում են իրենց այսօրվա տրամաբանությամբ: Այս տարբերակում նախագծի լիարժեք իրագործման հավանականությունը պետք է ցածր գնահատել:
- ՀՀ իշխանություններն ինչ-որ պահից անուղղակիորեն միջամտում են գործին: Նման զարգացման դեպքում, չնայած օբյեկտիվ բնույթ կրող մի շարք հիմնախնդիրների, նախագիծն իրագործվելու իրատեսական հնարավորություն է ձեռք բերում:

Գագիկ Հարությունյան
«Նորավանք» հիմնադրամ

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Արևմտյան Հայաստանում անցկացրած օրերիս մասին տպավորություններ պատմելու նպատակով չէ, որ գրիչ եմ վերցնում: Պարզապես կան բազմաթիվ երևույթներ, որ հեռվից, Արևմտյան Հայաստանում չլինելով, լիովին այլ կերպ ենք պատկերացնում, իսկ երբեմն էլ չենք պատկերացնում: Նման խնդիրների մասին է, որ ցանկանում եմ կիսել մտորումներս հայրենակիցներիս հետ, մտորումներ՝ ծնված մտահոգություններից, որոնք հաստատ միայն իմը չեն...

Մեզանում կան տարածված թյուր պատկերացումներ, թե իբր Արևմտյան Հայաստանում թուրքերը չեն կառուցում, քանի որ իրենք էլ գիտեն, թե մի օր հետ են տալու մեզ: Ինքս էլ հավատում եմ, որ արդարությունը վերականգնվելու է, մենք վերատիրելու ենք մեր հայրենի հողերին, բայց, որ թուրքերը չեն կառուցում՝ լիակատար ինքնախաբեություն է: Թուրքերն ամեն բան անում են յուրացնելու համար մեր բնիկ տարածքները: Պետությունը հսկայական միջոցներ է ներդնում, ամենուրեք շինարարություն է ընթանում մեծ չափերով ու թափով (և՛ ճանապարհներ, և՛ շինություններ): Ընկերներս, որ նախորդ տարի էին եղել նույն վայրերում, զարմացել էին՝ տեսնելով, որ իրենց տեսած անկտուր տներն ունեին նոր կտուրներ՝ բոլորը միանման: Այդ միատեսակությունն էլ վկայում էր ծրագրված պետական քաղաքականության մասին:

Զգոն պետական քաղաքականության մասին վկայող հատկանշական մի դեպք տեղի ունեցավ մեզ հետ Այանիս ամրոցից դեպի Վան տանող ճանապարհին: Մտածելով, որ վառելիքը չի բավականացնի Վան հասնելուն, կանգնեցինք քրդաբնակ մի գյուղում՝ հարցնելու վառելիքի լիցքավորման հնարավորության մասին: Մեր թարգմանիչը, որ տիրապետում էր քրդերենին և թուրքերենին, գյուղացիների հետ զրուցում էր քրդերեն: Նկատելով մեզ՝ մոտեցան պատշաճ հագնված երկու երիտասարդ, որոնք քրդերեն չէին հասկանում, ուստի մեր թարգմանիչը նրանց հետ խոսեց թուրքերեն: Սրանք դպրոցի ուսուցիչներն էին, ազգությամբ թուրք, որոնք կեղծ ու քծու ժպիտով պատասխանեցին մեր հարցերին՝ ուշադրություն դարձնելով մեր մեքենայի համարանիշին, որի վրա առկա էին Հայաստանը մատնանշող AM տառերը: Իմանալով, որ մոտակա բենզալցակայանը 5-6կմ հեռավորության վրա է, ճանապարհվեցինք: Սակայն չանցած այդ տարածությունը՝ շրջափակվեցինք զինվորականների կողմից և ենթարկվեցինք խիստ մանրազնին խուզարկության: Համոզվելով, որ զբոսաշրջիկներ ենք, նրանք, ներողություն խնդրելով, հեռացան (Թուրքիայում ամեն տեղ զբոսաշրջիկներին գլխի վրա են ընդունում, քանի որ նրանք են լցնում թուրքական պետական բյուջեի զգալի մի մասը): Կասկածել էին, թե մենք Հայաստանից օգնություն ենք բերել քրդերին, որոնք տասնամյակներ շարունակ ապստամբական իրադրության մեջ են Թուրքիայում: Ինձ համար տպավորիչը նրանց օպերատիվությունն էր. չէր անցել 5 րոպե այդ գյուղից դուրս գալուց, երբ մենք կանգնեցվեցինք և խուզարկվեցինք:

Հետո իմացանք, որ Արևմտյան Հայաստանի բոլոր գյուղերում պետությունն ուսուցիչներ է նշանակում միայն ազգությամբ թուրք երիտասարդների: Փաստորեն, նրանք գործուղվում են, և դա համարվում է զինծառայություն (ինչպես որ մեր նորավարտ ուսանողներն էին գործուղվում Արցախ՝ զինծառայության փոխարեն): Նրանք և՛ դառնում են երիտասարդական ավյունով թուրքականության քարոզիչներ, և՛ մնալով տեղերում՝ աստիճանաբար կարող են ազդել տեղի ժողովրդագրական պատկերի վրա:

Եղանք Աղթամարում: Սուրբ խաչի վրա խաչն էլի չկար: Բայց ականատես եղանք ավելի վատթար մի դեպքի. թուրք ուղեկցորդն արտասահմանցի զբոսաշրջիկներին ցույց էր տալիս եկեղեցու պատերի հայերեն արձանագրությունները՝ դրանք ներկայացնելով իբրև «հին թուրքական արձանագրություններ, որոնք աշխարհում այսօր ոչ ոք չի կարողանում կարդալ»... Մեր ներկայությունը միանգամից փոխեց պատկերը. մեր թարգմանիչը գրեթե հարձակվելով կեղծարար ուղեկցողի վրա՝ անգլերենով օտարերկրացիներին բացատրեց իրականությունը և տող առ տող կարդալով հայերեն վիմագրերը՝ սկսեց թարգմանել: Թուրք ուղեկցողը հեռացավ: Օտարերկրացիները շատ շնորհակալ եղան ճշմարտությունն իմանալու համար: Բայց սա եղավ միայն այդ պահին՝ շնորհիվ մեր ներկայության: Իսկ Աղթամար այցելողների թիվն արտակարգ մեծ է. ամեն 10-15 րոպեն մեկ ափից զբոսաշրջիկներով լի բեռնված մի նավ էր մոտենում

կղզուն: Նրանք բոլորն էլ լսում են Աղթամարի պատմության պաշտոնական կեղծ բացատրությունը: Այդ պահին հիշեցի վերանորոգումից հետո մեր հանրապետության պատվիրակության այցելության ամոթալի փաստը. այն ժամանակ ևս ոչինչ չէր ասվել հուշարձանի հայկականության մասին, մեր պատվիրակությանն էլ անգամ խոսք ասելու իրավունք չէր տրվել:

Միակ մխիթարությունը (եթե դա կարելի է մխիթարություն համարել) նոր փոխված ցուցանակն էր, որի վրա նշվում էր, որ հուշարձանի կառուցողը Վասպուրականի հայոց Գագիկ արքան է եղել: 2-3 տարի առաջ ցուցանակի վրա Գագիկ Արծրունու հայ լինելու մասին նշումն էլ չկար:

Այս մխիթարությունը, սակայն, չեք ունենա Անի այցելելիս: Հայոց փառահեղ մայրաքաղաքի պատմությունը ներկայացնող ցուցանակի վրա անգամ «հայ» բառը չկա: Դա դեռ չարյաց փոքրագույնն է. Անի տանող միակ ճանապարհին կառուցված է հուշարձան՝ հայերի կողմից կոտորված թուրքերի հիշատակին... Վիրավորվածությունից չգիտես ինչպես արձագանքես. աղաղակող այդ կեղծիքի առաջ կանգնելով՝ միայն մի բան անցավ մտքովս. երանի իրականում այդպես եղած լիներ:

Սրանք տեսնելուց հետո չգիտես ինչպես գնահատես Աղթամարի վերանորոգումից հետո վերաբացման արարողությանը մասնակցած մեր «պետական այրերի» զոհունակությունը, որոնք այցելել էին նաև Անի:

Արևմտյան Հայաստանի հարավում մեզ հանդիպեցին քրդախոս հայեր, ընդ որում՝ իրենք մեզ մոտեցան՝ նկատելով մեր մեքենայի՝ Հայաստանը ցույց տվող AM-ով համարա-նիշը: Ցավոք, երիտասարդները հայերեն չգիտեին: Ասացին, որ ծերերից մեկ-երկու հոգի գիտեն միայն: Հիմնականում մահմեդականներ էին, բայց ունեին հայ լինելու հստակ գիտակցում: Ոգևորողն ինձ համար ոչ միայն նրանց գոյությունն էր, այլև ոգու ամրությունը. հաջորդ օրը հատուկ զանգահարեցին՝ իմանալու, թե որևէ խնդիր կամ որևէ բանի կարիք արդյոք չունենք:

Շատ մտահոգիչ են Հայոց եկեղեցու կեցվածքը մահմեդական հայերի նկատմամբ[1] և նրանց հետ մեր հարաբերության հարցն ընդհանրապես: Տարբեր տեղեկությունների համաձայն՝ ներկայումս 1-3 միլիոն մահմեդականացած հայեր (այդ թվում՝ համշենահայեր) են ապրում Թուրքիայի տարածքում, որոնք պահպանել են իրենց հայկական ծագման հստակ հիշողությունը: Հայկական արմատների մասին հիշողություն են պահպանել նաև զազաները, որոնց թիվը 5-6 միլիոն է: Տեղեկություններ կան նաև ալևի-քրդերի հայկական արմատների մասին (վերջերս Թուրքիայում մեծ աղմուկ բարձրացավ, երբ այդ մասին հայտարարեց հենց Թուրք պատմաբանների ընկերակցության նախագահ Հալաչօղլուն): Հայտնի է, որ Մեծ եղեռնի ժամանակ շուրջ 200 հազար հայեր, հիմնականում երեխաներ, բռնի մահմեդականացան: Ինչ եղան նրանք՝ որևէ հստակ տեղեկություն կամ վիճակագրություն չունենք[2]: Այսինքն՝ ոչ լրիվ ու ոչ ճշգրիտ հաշվարկներով՝ մինչև 10 միլիոն մահմեդական, սակայն հայկական հիշողությունը պահպանած ազգակիցներ ունենք մեր պատմական հողերի վրա բնակվող: Սա այն դեպքում, երբ ողջ աշխարհում են հաշվվում մոտ այդքան քրիստոնյա հայեր:

Չեմ ցանկանում վիրավորել որևէ մեկի, սակայն 1990-1994թթ. մեր ազատագրված տարածքների վերաբնակեցման փաստից ելնելով (15 տարում բնակեցված հայերի թիվը 15 հազարի էլ չի հասնում)՝ թույլ եմ տալիս ինձ ենթադրել, որ եթե վաղը, Աստծո կամքով, Արևմտյան Հայաստանն ազատագրվի, նրա հիմնական բնակիչները պետք է հենց այդ մահմեդականացած հայերը լինեն: Մենք ոչ մի քաղաքականություն չունենք այդ ուղղությամբ, մինչդեռ թուրքական պետությունն այս դաշտում ևս ձեռքերը ծալած չի նստել. համշենահայերի մեջ ամենամոլի մահմեդականության քարոզն է տարվում: Նրանք լավ գիտակցում են, որ համշենահայերին լիակատար «հայացնելը» մեծ ջանքեր չի պահանջելու, ինչի ապացույցը կարող է լինել նախկին ԽՍՀՄ տարածքի համշենահայության օրինակը:

---

[1] Հայտնի է, որ դարեր շարունակ անգամ կաթոլիկություն ընդունած հայերն օտարվել են մեր եկեղեցու կողմից՝ ժողովրդի մեջ ստանալով «ֆռանկ» անվանումը: Նրանց մի մասը հետագայում փորձեց վերադառնալ Հայոց եկեղեցուն, սակայն չընդունվելով՝ դարձավ մահմեդական: Այսօր քչերին է հայտնի, որ թուրք մսխեթցիները, որոնց Ջավախքում բնակեցնելով՝ վրացական կառավարությունը փորձում է փոխել տեղի ժողովրդագրական պատկերը, կաթոլիկացած, ապա մահմեդականացած հայեր են. այդ մասին վկայում են Վատիկանի արխիվներում պահպանված վավերագրերը:

[2] Ավագ ընկերներիցս մեկը պատմում էր, որ տարիներ առաջ հանդիպել է մի ծերունու, որն ասում էր իր հայկական ծագման, հայ լինելու մասին, թեպետ ոչ հայերեն գիտեր, ոչ տեղյակ էր, թե ովքեր են եղել իր ծնողներն ու նախնիները կամ որտեղացի են: Հարցին՝ թե որտեղից գիտի իր հայ լինելու մասին, ծերունին արցունքոտած աչքերով պատմել էր, որ երբ շատ փոքր էր, հիշում էր, թե ինչպես էին թուրքերը նրան վիրավորում և արհամարհանքով «էրմենի չոջուխ» կոչում:

Հանդիպեցինք նաև քրիստոնյա հայ ընտանիքների (հատկապես Կոմմագենեի տարածքում), որոնք ևս ձուլման եզրին են: Նրանց շրջանում էլ հայերեն գիտեին միայն տարեցները: Ցավալի էր իմանալ, որ վերջին անգամ նրանք հայ հոգևորականի երես տեսել են տարիներ առաջ՝ Ստամբուլ այցելելիս:

Մենք սիրում ենք հրեաներին օրինակ բերել բազմաթիվ (հատկապես, ցեղասպանության ճանաչման և Իսրայել պետության ստեղծման) հարցերում: Կարծում եմ, այստեղ տեղին կլինի վկայակոչել նրանց հաջողությունները՝ տարբեր երկրներում ապրած, կրոնը, լեզուն և ինքնության շատ տարրեր կորցրած հրեաներին «վերահրեացնելու» բնագավառում: Նրանց հաջողվեց անգամ «վերակենդանացնել» և Իսրայելի պետական լեզու դարձնել հին եբրայերենը՝ իվրիտը, որ «մեռած լեզու» էր: Այդ ուղղությամբ նրանց մոտ աշխատում էին գիտահետազոտական ինստիտուտներ, իսկ մեզանում այդ բնագավառում իշխողն անհոգ անտարբերությունն է:

Հայկականություն քարոզող թուրքալեզու և քրդալեզու գրականության խիստ պակաս (ավելի ճիշտ՝ բացակայություն) ունենք: Թուրքալեզու գրականության պակասը փորձում են լրացնել Ստամբուլի հայ պարբերականները, որոնք զգալի չափով թուրքալեզու են: Բայց նրանք կարող են այդ բացը լրացնել խիստ սահմանափակ չափով: Եթե, ասենք, որևէ հայկական թուրքալեզու թերթ գրի, որ արդարությունը պետք է վերականգնվի և Արևմտյան Հայաստանը վերադարձվի իր բնիկ տերերին, հաջորդ օրն իսկ կփակվի, դեռ չասած, թե ինչ դատաստանի կարող են ենթարկվել հայ լրագրողները նման քայլի համար. վկա լուսահոգի Հրանտ Դինքի սպանությունը:

Հայկականություն քարոզող քրդալեզու գրականություն ընդհանրապես գոյություն չունի: Թուրքալեզու և քրդալեզու քարոզչության համար կա ամենապարզ ու ամենագործուն եղանակը, որը մենք, զարմանալիորեն, չենք օգտագործում՝ ինտերնետը: Ցանկացած թուրքալեզու և քրդալեզու հայկական կայք կարող է տեղադրվել ինտերնետում, և Թուրքիայի ամեն մի անկյունում նստած մեր արյունակիցը կարող է բացել ու կարդալ այն: Անցել են այն ժամանակները, երբ որևէ երկիր գրականություն մտցնելու համար պետք է հաղթահարեր ահռելի դժվարություններ՝ մաքսանենգ ճանապարհով անցկացնել պետական սահմանը, երկրի ներսում ենթարկվել հետապնդումների և այլն: Անվտանգ քարոզչության հարցը լուծված է ինտերնետի միջոցով: Եվ ընդհանրապես, մեր ժողովրդի սփռվածության այսօրվա պայմաններում ինտերնետը պարզապես երկնային պարգևի նման մի բան է մեր ժողովրդի համար, որից համառորեն շարունակում ենք շատ քիչ օգտվել:

Ես հասկանում եմ, որ ՀՀ կառավարության հնարավորություններն այսօր բավական սահմանափակ են, բայց չէ՞ որ սահմանափակ չեն հայության (և՛ հայաստանաբնակ, և՛ սփյուռքաբնակ) հնարավորություններն ընդհանրապես: Իսկ սրանք մտահոգություններ են, որոնց լուծումներն այսօր իսկ հրամայական են: Տարիներ հետո դրանք իրենց հետ կբերեն նորանոր, ավելի մեծ ու բարդ խնդիրներ, որոնց լուծումն այդժամ կարող է դառնալ նաև անհնարին:

Նեմրութ լեռան սրբավայր

Արտակ Մովսիսյան

ԹՈՒՐՔԻԱ. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Ս.թ. հոկտեմբերի 3-ին մեջտեղ եկան միանգամից երկու շատ կարևոր տեղեկություններ, որոնք թեև առնչվում են տարբեր ոլորտների, սակայն իրենց բնույթով բավական տպավորիչ են, որպեսզի լրջորեն չդիտարկվեն թուրքական արտաքին քաղաքականությանն առնչվող տեղաշարժերի համատեքստում.

- այդ օրը թուրքական ազդեցիկ «Զաման» թերթը գրեց, թե սեղանին է դրված Ռուսաստանի կողմից Թուրքիային հակաօդային պաշտպանության «C-400» համալիրների վաճառքի հարցը[1],
- մի փոքր ավելի ուշ հայտնի դարձավ, որ Անկարայում որոշում է կայացվել $3.5 մլրդ-ի ներդրում կատարել իրանական խոշորագույն՝ «Հարավային Փարս» գազահանքում:

Եթե թուրք-իրանական գազային համագործակցության առումով առանձնանում է այն հանգամանքը, որ ամերիկա-իրանական լարված հարաբերությունների ֆոնին[2] Անկարան ու Թեհրանը պայմանավորվածություն են ձեռք բերում ռազմավարական մակարդակ ունեցող հարցի շուրջ, և այդ համատեքստում ուշադրություն է գրավում այն փաստը, որ գազային համատեղ նախագծի իրականացման համար թուրքական կողմը հատկացնում է հենց պետական միջոցներ[3], ապա պակաս կարևոր չպետք է դիտարկել ռազմական ոլորտում ռուս-թուրքական համագործակցության հեռանկարը: Թուրքիային ռուսական «C-400» համալիրների վաճառքը ոչ այնքան կնշանակի, թե Մոսկվան կարողացավ լուրջ հաջողության հասնել մինչև վերջերս իր համար փակ թուրքական շուկայում[4], այլ նման գործարքի կայացումը առաջին հերթին պետք է ընկալել որպես ցուցիչ, թե Վաշինգտոնի հակասությունները շարունակվում են ոչ միայն Էրդողանի կառավարության, այլև թուրքական զինվորական վերնախավի հետ:

Երկրորդ կարևոր դիտարկումն այն է, որ վերոհիշյալ երկու տեղեկությունների բնույթն ինքնին բավարար հիմք է ենթադրելու, որ թուրքական արտաքին քաղաքականության մեջ տեղի ունեցող կամ սպասվող փոփոխությունները դժվար թե լինեն մակերեսային ու կարճաժամկետ: Եվ այդ իմաստով, չնայած փոփոխություններն առաջին հերթին վերաբերում են Արևմուտքի հետ Անկարայի հարաբերություններին, սակայն, իրականում, կարող են ունենալ ավելի լայն բովանդակություն:

Հարաբերությունները ԱՄՆ-ի հետ

Իրաքյան պատերազմի մեկնարկից չորս տարի անց նպատակ ունենալով խոչընդոտել Մերձավոր Արևելքում իրանական ազդեցության աճին և Թեհրանի դեմ ուղղված կոալիցիոն երկրների շղթա ստեղծել՝ Վաշինգտոնը տարածաշրջանում սկսեց ռազմաքաղաքական բնույթի նախաձեռնությունների մի ամբողջ շարք:

---

[1] «C-400»-ը համարվում է հակաօդային պաշտպանության ռուսական նորագույն համալիր, որն առայժմ տեղադրվել է միայն Մոսկվայի մերձակայքում՝ 2007թ. հուլիսի 1-ին:

[2] Օրինակ՝ սեպտեմբերի 25-ին ԱՄՆ Կոնգրեսն ընդունեց նոր օրինագիծ, որով Վաշինգտոնը լրացուցիչ պատժամիջոցներ է սահմանելու Իրանի նկատմամբ:

[3] Նախատեսվում է, որ «Հարավային Փարսին» առնչվող իրանա-թուրքական պայմանագիրը կկնքվի հոկտեմբերի երկրորդ կեսին: Թուրքական կողմից նախագիծն իրականացնելու է *«TPAO»* ընկերությունը:

[4] Ըստ որոշ տեղեկությունների, Անկարան պատրաստ է իր հակաօդային պաշտպանության համակարգի արդիականացման համար ծախսել մոտ $1.2 մլրդ, և այդ ծրագիրը պետք է ավարտված լինի 2009թ.: Նման համալիրներ մատակարարելու համար հայտեր ներկայացրած ընկերություններն ամերիկյան, իսրայելական, չինական ու ռուսական են:

Հուլիսի 28-ին և 29-ին պարզ դարձավ, որ առաջիկա 10 տարիներին ԱՄՆ-ը Իսրայելին ու Եգիպտոսին տրամադրելու է, համապատասխանաբար, $30 մլրդ-ի ու $13 մլրդ-ի ռազմատեխնիկական օգնություններ: Բացի այդ, Սաուդյան Արաբիայի և Պարսից ծոցի արաբական միապետությունների՝ Քուվեյթ, Բահրեյն, Կատար, Արաբական Միացյալ Էմիրություններ, Օման, հետ նույն ժամանակահատվածի կտրվածքով կնքելու է $20 մլրդ-ի ռազմատեխնիկական մատակարարումներ իրականացնելու մասին պայմանագրեր:

Քաղաքական մասով շեշտը հիմնականում դրվում է երկու նախագծերի իրականացման վրա, որոնք նույնպես ուղղված են տարածաշրջանում Իրանի ազդեցության կրճատմանը.

- խնդիր է հետապնդվում սկզբունքային պայմանավորվածության հասնել իսրայելա-պաղեստինյան բանակցություններում, ինչը հնարավորություն կտա արդեն այս նոյեմբերին Վաշինգտոնում հարցի առնչությամբ կայանալիք միջազգային համաժողովում համաձայնության գալ պաղեստինյան պետության ստեղծման ու արաբական երկրների կողմից Իսրայելը ճանաչելու հարցերում,
- պակաս կարևոր չի համարվում Լիբանանում արևմտամետ վարչակազմի ամրապնդումը, ինչն ԱՄՆ պատկերացմամբ կարող է միայն նպաստել Սիրիայում իրանական ազդեցության սահմանափակմանը:

Թուրքիայի մասով այս ամենի մեջ առանձնանում է այն կարևոր փաստը, որ այդ երկիրը դուրս մնաց թե՛ մերձավորարևելյան երկրներին մատակարարվող ամերիկյան $63 մլրդ-ոց ռազմական փաթեթից և թե՛ ԱՄՆ-ի կողմից ներգրավված չէ իսրայելա-պաղեստինյան ու լիբանանյան հարցերի շուրջ ընթացող գործընթացներում, ինչն, օրինակ, առկա է սաուդյան ու եգիպտական դիվանագիտությունների պարագայում:

Քանի որ թուրքական քաղաքականությունը ներգրավված չէ, հետևաբար՝ քիչ հավանական է, որ Անկարայի շահերը հաշվի առնվեն ԱՄՆ մերձավորարևելյան նոր՝ համալիր ու ենթադրաբար՝ միջնաժամկետ բնույթ ունեցող նախաձեռնությունում:

Կարևոր մյուս ցուցիչը քրդական գործերում ի հայտ եկող նոր իրողություններն են: Հոկտեմբերի 2-ին Էրբիլում նստող Քուրդիստանի տարածաշրջանային կառավարությունը (ՔՏԿ) հայտարարեց, թե իր ենթակայության ներքո գտնվող շրջաններում[1] առկա նավթա-գազային պաշարների յուրացման նպատակով պայմանագրեր է կնքելու օտարերկրյա ընկերությունների հետ: Թեև Իրաքի նավթի նախարարությունը շտապեց հայտարարել, թե նման պայմանագրերն օրինական ուժ չեն ունենա[2], սակայն փաստն այն, որ արդեն այսօր ոչ միայն հստակեցված են օտարերկրյա այն ընկերությունները, որոնց հետ պետք է կնքվեն պայմանագրերը[3] (այլապես ՔՏԿ-ն հանդես չէր գա նման հայտարարությամբ), այլև Իրաքի քրդական վերնախավը բավական լուրջ քայլ է կատարել անկախություն տանող ճանապարհին: Հյուսիսիրաքյան նավթի եկամուտները կարող են որակական նոր հարթություն տեղափոխել քրդական պետության ստեղծման ընթացքը:

Բայց գլխավոր հետևությունը դա էլ չէ: Իրաքում քրդերի ցանկացած հզորացման վերաբերյալ Թուրքիայի հայտնի դիրքորոշման ֆոնին ՔՏԿ նման քայլը վկայում է, որ Էրբիլում

---

[1] ՔՏԿ իշխանության ներքո են գտնվում հյուսիսիրաքյան քրդական երեք նահանգները՝ Դոհուքը, Էրբիլը և Սուլեյմանիան: ՔՏԿ-ն փաստացի իշխանություն ունի նաև Իրաքի Նինավա, Քիրքուկ ու Դիյալա նահանգների որոշ հատվածների նկատմամբ: Մոտավոր հաշվարկների համաձայն, ներկայումս ՔՏԿ իշխանության ներքո գտնվող տարածքը կազմում է գրեթե 63 հազ. կմ^2: Ըստ արևմտյան աղբյուրների, այսօր Իրաքում բնակվում են շուրջ 4.5 մլն քրդեր, որոնց ավելի քան 95%-ը կենտրոնացած է հենց վերոնշյալ նահանգներում:

[2] Մինչ օրս Բաղդադի կենտրոնական կառավարությունը չի կարողանում լուծել երկրի նավթագազային պաշարների շահագործման ու դրանից ստացվող եկամտի բաշխման հարցը: Իրաքի հյուսիսում բնակվող քրդերն ու հարավում գտնվող շիաները չեն ցանկանում իրենց շրջաններում առկա էներգակիրներից ստացվող եկամուտները կիսել ո՛չ կենտրոնական կառավարության և ո՛չ էլ նման պաշարներ չունեցող՝ Իրաքի կենտրոնական հատվածում բնակվող սուննիների հետ: Հարցի հետ կապված վերջին՝ սեպտեմբերին կայացած բանակցությունները նույնպես ավարտվեցին անհաջողությամբ:

[3] Այդ ընկերությունների մեծ մասն ամերիկյան է ու կանադական: Հայտնի է նրանցից առնվազն մեկի անվանումը՝ ԱՄՆ Տեխաս նահանգում գործող *«Hunt Oil»*-ը:

ունեն Վաշինգտոնի ոչ միայն հավանությունը, այլև հաշվի առնելով հարցի արժեքը՝ նաև որոշ երաշխիքներ (հասկանալի է, որ այդ պարագայում քրդերին կարող է երաշխիքներ տալ միայն ԱՄՆ-ը)։ Թեև ՔՏԿ կողմից նման որոշման կայացումը չպետք է դիտարկել միայն ԱՄՆ-քրդեր-Թուրքիա եռանկյունու համատեքստում, սակայն պարզ է, որ ՔՏԿ կողմից այդպիսի որոշման կայացումը, իրականում, Վաշինգտոնի կողմից Անկարայի նկատմամբ կիրառված նոր ճնշում է։ Պետք է նաև այդ իմաստով դիտարկել ԱՄՆ Սենատի սեպտեմբերի 26-ի բանաձևը՝ Իրաքը դաշնային երեք շրջանների (քրդական, սուննիական և շիական) բաժանելու վերաբերյալ։

Պատահական չէ, որ Անկարայում հարկ համարեցին հրապարակային մեղադրանքների դաշտ տեղափոխել Թուրքիայում գործող քրդական զինյալների կողմից ամերիկյան արտադրության զենքերի կիրառման փաստը[1], իսկ հոկտեմբերի 1-ին հայտնի դարձավ, որ հրաժարական է ներկայացրել Քրդական բանվորական կուսակցության զինյալների դեմ պայքարի համակարգման գծով Անկարայում ԱՄՆ հատուկ ներկայացուցիչ, պահեստի գեներալ Ջոզեֆ Ռալստոնը[2]։

Եվ վերջապես, ամերիկա-թուրքական շարունակվող հակասությունների ներքո է ընկնում ԱՄՆ Կոնգրեսի կողմից Հայոց ցեղասպանության մասին 106-րդ բանաձևի ընդունման հարցը։ Թեև հոկտեմբերի սկզբին Վաշինգտոնում հարկ համարեցին անգամ լրատվական արտահոսք կազմակերպել բանաձևի ընդունման վերջնաժամկետի վերաբերյալ (ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի մեծամասնության ղեկավար Սթենի Հոյերը հայտարարեց, թե 106-րդ բանաձևը կընդունվի մինչև ԱՄՆ-ում նշվող «Երախտագիտության օրը»՝ նոյեմբերի 25-ը), սակայն գլխավորը չպետք է լինի բանաձևի ընդունման հավանականության վրա կենտրոնա-նալը։

Փաստն այն է, որ 2007 թվականը, ըստ երևույթին, բեկումնային եղավ արևմտյան տեղեկատվական քաղաքականության մեջ Հայոց ցեղասպանության հարցի ներկայացման առումով։ Եվ այդ իմաստով ամենևին էլ պատահական չէր, որ ներկայումս քննարկվող 106-րդ բանաձևը կոնգրեսական Ադամ Շիֆը ներկայացրեց ս.թ. հունվարի 19-ին Ստամբուլում տեղի ունեցած «Ակոս» թերթ գլխավոր խմբագիր Հրանտ Դինքի սպանությունից հետո՝ հունվարի 30-ին։ Այսինքն, եթե անգամ Սթենի Հոյերը սխալվի, միևնույն է, այսօր գործընթացը տանում է ԱՄՆ-ի կողմից Հայոց ցեղասպանության փաստի ճանաչմանը[3]։ Իսկ թուրք-ամերիկյան հարաբերությունների տեսանկյունից կարևոն այն է, որ Վաշինգտոնում ամեն կերպ ձգտում են դա ցույց տալ Անկարային։

Հարաբերություններն Իսրայելի հետ

Իսրայելա-թուրքական հարաբերությունները երբեք չեն վերաբերել սոսկ երկու երկրներին։ Ռազմաքաղաքական դաշինքը Իսրայելի ու Թուրքիայի միջև 20-րդ դարի երկրորդ կեսին հանդիսացել ու Արևմուտքի կողմից դիտարկվել է որպես մերձավորարևելյան փոխդասավորվածության առանցքային տարրերից մեկը։ Հետևաբար, Թել Ավիվի ու Անկարայի հարաբերություններում հրապարակային հակասությունների ի հայտ գալն ու դրանց շարունակվելը մի քանի տարի չեն կարող լինել իրավիճակային և չառնչվել այդ երկրների առաջնային շահերին ու արդյունքում՝ դժվար թե արագորեն մեջտեղից դուրս գան։

Այդ իմաստով թուրք-իսրայելական հարաբերությունները թեև իրենց նշանակությամբ զիջում են ԱՄՆ-ի հետ Անկարայի ունեցած հարաբերություններին, սակայն միանշանակ կարող են հանդես գալ որպես թուրքական քաղաքականությանն առնչվող ցուցիչ։

---

[1] Ս.թ. հուլիսի 20-ին Վաշինգտոնի հասցեին նման մեղադրանքներով հանդես եկավ Թուրքիայի այն ժամանակվա փոխվարչապետ ու արտգործնախարար Աբդուլա Գյուլը, իսկ օգոստոսի 30-ին նրան հետևեց իշխող Արդարություն և զարգացում կուսակցության (ԱԶԿ) փոխնախագահ Սաբան Դիսլին։

[2] Ուշագրավ է, որ որպես հրաժարականի պատճառաբանություն ներկայացվեց հարցի առնչությամբ թուրք-ամերիկյան համատեղ աշխատանքում առաջընթացի բացակայությունը։

[3] Օրինակ՝ ներկայումս Հայոց ցեղասպանության փաստի ճանաչման օգտին են հանդես գալիս 227 կոնգրեսական, ինչն աննախադեպ բարձր թիվ է։

Հայտնի է, որ ս.թ. սեպտեմբերի 6-ին իսրայելական օդուժը հետախուզական չվերթ իրականացրեց Սիրիայի հյուսիսարևելյան հատվածում[1]՝ ամերիկյան աղբյուրների մատուցմամբ նաև ռմբահարելով սիրիական ռազմական օբյեկտներից մեկը[2]։

Թեև միջադեպն ինքնին այդքանով ավարտվեց, սակայն ուշադրություն գրավեց դրան հետևած զարգացումներում Անկարայի դիրքորոշումը։

Նախ, սեպտեմբերի 8-ին թուրքական կողմը հարկ համարեց գաղտնազերծել Սիրիային սահմանակից թուրքական Գազինթեփե ու Հաթայ նահանգներում իսրայելական օդուժի «F-15» ինքնաթիռների նետած վառելիքի լրացուցիչ բաքերի հայտնաբերման փաստը։ Այնուհետև, Թուրքիայի արտգործնախարարությունը բացատրություն պահանջեց Անկարայում իսրայելական դեսպանից՝ հայտնաբերվածի կապակցությամբ։

Երկու օր անց՝ սեպտեմբերի 10-ին, Թուրքիան արտգործնախարար Ալի Բաբաջանի մակարդակով հրապարակավ մեղադրեց Իսրայելին նշված գործողության ժամանակ թուրքական օդային տարածքը խախտելու մեջ։ Իսկ հաջորդ երեք օրերին ի հայտ եկան լրատվական երկու ուշագրավ արտահոսքեր։

Սեպտեմբերի 11-ին քուվեյթյան «Ալ-Վաթան» պարբերականը գրեց, թե Անկարան քննարկում է Իսրայելի հետ ռազմական համատեղ զորավարժությունները չեղյալ հայտարարելու հարցը։

Սեպտեմբերի 13-ին նույն երկրում լույս տեսնող «Ալ-Ջարիդա» թերթի հրապարակման համաձայն, գործողության նախօրեին թուրքական բանակը ոչ միայն Իսրայելին ապահովել է հետախուզական անհրաժեշտ տեղեկությամբ, այլև թույլատրել է օգտագործել Թուրքիայի օդային տարածքը։ Ընդ որում, «Ալ-Ջարիդայի» ներկայացմամբ, վարչապետ Էրդողանը հայտարարել է, որ թուրքական ռազմական հետախուզությունը չի համակարգել իր գործողությունները կառավարության հետ, այսինքն՝ գործել է ինքնուրույնաբար։

Թեև հնարավոր է, որ քուվեյթյան պարբերականների մատուցած տեղեկությունները համապատասխանում են իրականությանն ու այդ առումով նախ և առաջ առնչվում են Էրդողանի կառավարություն-թուրքական բանակ հակասություններին, սակայն փաստն այն է, որ նման կարևոր ու միջազգային հնչեղություն ստացած միջադեպի կապակցությամբ պաշտոնական Անկարան որոշում կայացրեց հրապարակային մեղադրանքների դաշտ տեղափոխել Իսրայելի հետ հարաբերությունները։

Այդ համատեքստում բավական ինտրիգային է ներկայանում դեպքի կապակցությամբ սեպտեմբերի 10-ին Անկարա Սիրիայի արտգործնախարարի այցելության փաստը։ Քիչ հավանական է, որ Դամասկոսում որոշեին Վալիդ ալ-Մուալեմին ուղարկել Թուրքիա՝ Անկարայի նկատմամբ ճնշում բանեցնելու նպատակով։ Սիրիան չունի այդ հնարավորությունը։ Ավելի հավանական է դիտվում այն տարբերակը, որ արտգործնախարարի մակարդակով տեղի ունեցած այցելությունը կարող է վկայել, թե անվտանգության գծով Անկարայի ու Դամասկոսի միջև առկա է որոշակի պայմանավորվածություն՝

- ինչը տրամաբանական է թվում 1999թ. Սիրիայում Աբդուլա Օջալանին ապաստանից զրկելուց հետո նկատվող թուրք-սիրիական ջերմացման ֆոնին,
- 2003թ. իրաքյան պատերազմի մեկնարկից հետո Մերձավոր Արևելքում առաջացած նոր իրավիճակի համատեքստում,
- և ինչը չի կարող չխոսել իսրայելա-թուրքական հակասությունների մասին։

---

[1] Սիրիայի արտգործնախարար Վալիդ ալ-Մուալեմի սեպտեմբերի 10-ի հայտարարության համաձայն, իսրայելական ինքնաթիռների նպատակակետն էր սիրիական Դեր ալ-Զուր նահանգում գտնվող օբյեկտներից մեկը։

[2] Ամերիկյան, բրիտանական ու իսրայելական աղբյուրները տարբեր տեղեկություններ են տալիս հարձակման ենթարկված ռազմական օբյեկտ(ներ)ի բնույթի վերաբերյալ՝ Սիրիայում առկա իրանական հրթիռային կայան(ներ)ից մինչև հյուսիսկորեացիների աջակցությամբ հիմնված սիրիական միջուկային կենտրոն։

Իսրայելա-թուրքական հակասություններնը ներկայացնող դրվագներից է նաև Հայոց ցեղասպանության նկատմամբ Թել Ավիվի ու հատկապես ԱՄՆ հրեական լոբբիի դիրքորոշման մեջ տեղի ունեցող փոփոխությունը։

Չնայած պաշտոնական Թել Ավիվը շարունակում է չճանաչել Հայոց ցեղասպանության փաստը, իսկ ԱՄՆ հրեական լոբբին իր գերակշիռ մասով շարունակում է Կոնգրեսում սատարել Անկարային[1], սակայն ինչպես Վաշինգտոնի պարագայում, այստեղ նույնպես առկա է հոգուտ ճանաչման ընթացող գործընթաց, ինչը հատկապես ակնհայտ դրսևորումներ ստացավ վերջին երկու տարիներին[2]։

Բայց եթե ԱՄՆ պարագայում նաև նպատակ է հետապնդվում լուծել ամերիկյան քաղաքականության համար կարևոր տարածաշրջանային ինչ-ինչ հարցեր (օրինակ՝ հայ-թուրքական սահմանի վերաբացման հարցը), ապա Իսրայելի դեպքում հարցի բարձրացումը կարող է ունենալ միայն մի նպատակ՝ ճնշում բանեցնել Անկարայի նկատմամբ։

Տեղաշարժ ԵՄ-ի հետ հարաբերություններում

Թուրքական քաղաքականությանն առնչվող զարգացումների հաջորդ կարևոր ցուցիչը Եվրամիության հետ Անկարայի հարաբերություններն են։

Չնայած ռազմաքաղաքական առումով Վաշինգտոնի հետ կապերն ունեցել են կարևոր բնույթ, սակայն Անկարայում հենց եվրոպական ուղղությունն է ավելի հիմնարար դիտարկվել՝ ելնելով արտաքին ռազմավարական ընտրության հարցից։

Ս.թ. օգոստոսի 27-ին հանդես գալով արտաքին քաղաքական իր առաջին ծրագրային ելույթով՝ Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզին Թուրքիայի առնչությամբ կատարեց բավական լուրջ հայտարարություն։ Ելիսեյան պալատի ղեկավարը ոչ միայն ուղղակի դեմ դուրս եկավ ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության հարցում, այլև Անկարայի վերաբերյալ առաջարկեց փոխգործակցության նոր ձևաչափ՝ «Միջերկրածովյան միություն», որը պետք է ստեղծվի արդեն 2008թ.։

Միգուցե «Միջերկրածովյան միության» գաղափարը ներկայումս ավելի շատ հանդես է գալիս զուտ ֆրանսիական շահերի տեսանկյունից և քիչ ընդհանրություններ ունի ողջ ԵՄ քաղաքականության հետ, բայց հաշվի առնելով Սարկոզիի ընտրվելուց հետո հատկապես եվրոպական ուղղությամբ նկատվող ֆրանսիական քաղաքականության ակտիվացումը՝ պետք է հավանական համարել, որ նման՝ հայեցակարգային բնույթի նախագծի առաջքաշումը չի կարող սահմանափակվել միայն Ֆրանսիայի քաղաքականության ձևաչափով։

Թուրքիայի մասով սկզբունքային նորությունն, անշուշտ, այն չէ, որ պաշտոնական Փարիզը հրապարակայնորեն մերժեց ԵՄ-ին Անկարայի անդամակցության հավանականությունը, այլ այն, որ անելով այդ քայլը՝ Սարկոզին առաջարկեց ուրիշ լուծում։ Նախկինում նման՝ այլ ճանապարհի բացակայությունը Անկարայում հիմնավորված որոշակի հույսեր էր թողնում երբևէ ԵՄ-ին անդամակցելու առումով։ Պաշտոնական Փարիզի «Միջերկրածովյան միությունը» նշանակում է, որ Անկարայում պետք է մոռանան այդ հույսերի մասին։

Եթե այս մոտեցումը ճիշտ է, ապա այն էական ազդեցություն կունենա Թուրքիայի արտաքին ու ներքին քաղաքականությունների վրա, և առաջիկայում մենք լուրջ տեղաշարժեր կնկատենք ԵՄ-Թուրքիա հարաբերություններում։

---

[1] Օրինակ՝ ս.թ. սեպտեմբերի 27-ին Նյու Յորքում Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի ու ԱՄՆ հրեական համայնքի ներկայացուցիչների հանդիպման արդյունքում վերջիններս հաստատեցին Անկարային իրենց աջակցությունը՝ Կոնգրեսում Հայոց ցեղասպանության մասին բանաձևի դեմ պայքարում։

[2] Ուշագրավ վերջին օրինակը օգոստոսի 24-ին ԱՄՆ հրեական ազդեցիկ կազմակերպություններից մեկի՝ «Հակաանվանարկման լիգայի» (ADL) կողմից Հայոց ցեղասպանության փաստի ճանաչումն էր։

Հետևություններ

Թեև սխալ է ասել, որ վերջին տարիներին Արևմուտքի հետ ի հայտ եկած հակասությունների արդյունքում արևմտյան ուղղության վերաբերյալ Անկարայում կայացվել է ռազմավարական որոշում, սակայն փաստն այն է, որ այդ հակասություններն այլևս չեն կրում իրավիճակային բնույթ և իրենց ազդեցությունն են թողնում թուրքական քաղաքականության վրա:

Այդ իմաստով թուրքական արտաքին քաղաքականության մեջ վերջին շրջանում ի հայտ եկած նոր նախաձեռնությունները (հարաբերությունների ջերմացումը արաբական ու ընդհանրապես իսլամական աշխարհի, ինչպես նաև Ռուսաստանի հետ), անշուշտ, օրինաչափ են, սակայն այդ մասով հիմնական հետևությունը պետք է այն լինի, որ այդ նախաձեռնությունները դժվար թե ունենան կարճաժամկետ բնույթ, քանի որ առնչվում են թուրքական քաղաքականության հիմնական ուղղություններին և պարունակում են համակարգային փոփոխության տարրեր:

Մյուս կողմից՝ թուրքական քաղաքականության մեջ տեղի ունեցող փոփոխությունների հիմնարար բնույթի օգտին են խոսում Թուրքիայի ներքին կյանքում նկատվող շարժերը:

Չի կարող ուշադրություն չգրավել այն հանգամանքը, որ այս տարի հուլիսին և օգոստոսին Թուրքիայում տեղի ունեցած խորհրդարանական ու նախագահական ընտրություններում թուրք իսլամիստների նման տպավորիչ, իսկ իրականում աննախադեպ հաղթանակը[1] հաջորդեց բանակի ու թուրքական քաղաքական դաշտի աշխարհիկ ուժերի հետ դեռևս գարնանից ծավալված բավական լուրջ պայքարին:

Ուշագրավը, սակայն, ոչ թե նման պայքարի առկայությունն էր և ոչ էլ անգամ իսլամիստների հաղթանակը, այլ Էրդողանի կառավարության որոշումը՝ նախաձեռնությունը վերցնել սեփական ձեռքը՝ նշանակելով արտահերթ խորհրդարանական ընտրություններ (հուլիսի 22): Ողջ հարցն այն է, որ հաշվի առնելով հանրապետական Թուրքիայի քաղաքական պատմությունը (զինվորականների կազմակերպած պետական երեք հեղաշրջումներ՝ 1960թ., 1971թ., 1980թ., և 1997թ. նրանց իսկ ուղղակի ճնշման ներքո իսլամիստ Էրբաքանի կառավարության անկումը)՝ քիչ հավանական է, որ Էրդողանի կառավարությունն ու ԱԶԿ-ն պարզապես որոշած լինեին դիմել ռիսկի: Հետևաբար, գործընթացն ունի ավելի խոր իմաստ, և թուրքական քաղաքականության մեջ իսլամիստական ազդեցության աճը պետք է դիտարկել Թուրքիայի համար առանցքային՝ արևմտյան բոլոր ուղղություններով (ԱՄՆ, ԵՄ, Իսրայել) ի հայտ եկած խնդիրների համատեքստում:

Սարգիս Հարությունյան
«Նորավանք» հիմնադրամ

---

[1] Ս.թ. հուլիսի 22-ին կայացած խորհրդարանական արտահերթ ընտրությունների արդյունքում ԱԶԿ-ն ստացավ թուրքական 550 տեղանոց խորհրդարանի 341 աթոռները: Օգոստոսի 28-ին տեղի ունեցած նախագահական ընտրություններում ԱԶԿ ներկայացուցիչ, Էրդողանի կառավարությունում արտգործնախարարի պաշտոնը զբաղեցնող Աբդուլա Գյուլն ընտրվեց երկրի նախագահ՝ ստանալով 339 պատգամավորների ձայները, մինչդեռ ընտրվելու համար նրան բավարար էր 276 քվե: Թուրքիայի պատմության մեջ առաջին անգամ մի կուսակցությունը (և այն էլ իսլամիստական համարվող) կարողացավ իր վերահսկողությունը սահմանել ոչ միայն խորհրդարանի, կառավարության, այլև նախագահի պաշտոնի նկատմամբ:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԿ-ՆԵՐՆ ԱՋԱԿՑՈՒՄ ԵՆ Ջ.ՍՈՐՈՍԻ ԾՐԱԳՐԵՐԻՆ

Հիմնվելով 1906թ.՝ Հայկական բարեգործական ընդհանուր միությունն (ՀԸԲՄ) այսօր աշխարհում խոշոր հայկական ոչ կառավարական կազմակերպություններից է: ՀԲԸՄ-ի կենտրոնական գրասենյակը գտնվում է Նյու Յորքում, տարեկան բյուջեն $36 մլն է: ՀԲԸՄ-ն իրականացնում է կրթական, մշակութային, մարդասիրական և այլ ծրագրեր, որոնց նպատակն է հայկական ժառանգության և ազգային ինքնության պահպանումը: Այդ ծրագրերում ներգրավված են աշխարհի տարբեր երկրների մոտ 400 000 հայեր:

Սույն թվականի սեպտեմբերի 19-ին ԱՄՆ-ում տեղի է ունեցել հայտնի ֆինանսիստ, բարեգործ, ԱՊՀ տարածքում գունավոր հեղափոխությունների ոգեշնչող և ֆինանսավորող՝ Ջորջ Սորոսի հանդիպումը ԱՄՆ 6 առավել խոշոր հայկական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

Քննարկվել են նորարարական մեթոդների, մոտեցումների և միջոցների կիրառման հնարավորություններն ու անհրաժեշտությունը Հայաստանում քաղաքացիական հասարակություն կառուցելու ճանապարհին:

Կլոր սեղան-քննարկումը կազմակերպվել էր Հայկական բարեգործական ընդհանուր միության կողմից, որի նախագահն է Պերճ Սեդրակյանը: Այս հանդիպումը տեղի է ունեցել Մանհեթեն համալսարանական ակումբում, ներկա էին հետևյալ ՀԿ-ների ներկայացուցիչներն ու անձինք.

- Հայ-ամերիկյան առողջության կենտրոն
- Հայաստան հիմնադրամ (ԱՄՆ)
- Երեխաների հայաստանյան հիմնադրամ
- Հայ օգնության ֆոնդ
- Իզմիրլյան հիմնադրամ
- Բարեգործ Ջեֆրեյ Հակոբյան
- Սորոսի հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի գործադիր տնօրեն՝ Լարիսա Մինասյան և այլք:

Կարճ ներածականից հետո Ջ.Սորոսը հույս է հայտնել, որ հանդիպումը կխթանի երկուստեք ազատ ու անկաշկանդ մտքերի փոխանակումը: Հիմնական օրակարգային խնդիրն էր՝ հասկանալ, թե ինչ կարելի է անել Հայաստանում քաղաքացիական հասարակության հզորացման, նաև իր կողմից ֆինանսավորվող Բաց հասարակության ինստիտուտի (OSI) հայաստանյան մասնաճյուղի գործունեության արդյունավետության բարձրացման համար:

Ջորջ Սորոսն ընդգծեց, որ համոզված է, թե Սփյուռքի հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությունը չափազանց կարևոր է Բաց հասարակության ինստիտուտի հայաստանյան մասնաճյուղի գործունեության խթանման և նպատակային ծրագրերի հաջող իրականացման համար: Նա նշեց, որ տեղյակ է, որ Սփյուռքը մեծ ներգործություն ունի հայաստանյան իրականությունում:

Բաց հասարակության ինստիտուտն ու Սորոսի հիմնադրամն իր բոլոր կառույցների, ներկայացուցչությունների համաշխարհային ցանցով 1984-2006թթ. տարբեր երկրներում իրականացրել է ավելի քան $400 մլն արժողության բազմաթիվ ծրագրեր, որոնց նպատակն է՝ բարելավել քաղաքականությունը և օգնել մարդկանց ապրել բաց, ազատ և ժողովրդավարական հասարակություններում: Հիմնական ուղղություններն են՝ մարդու իրավունքներ, տեղեկատվության ազատություն, կրթության հասանելիություն և այլն:

Սկսած 1997թ.՝ Հայաստանում հիմնադրամն իրականացրել է իր հիմնական առաքելությունը և տարբեր ծրագրերի միջոցով ներդրել մոտ $20 մլն:

Հանդիպման ընթացքում Ջ.Սորոսը ներկայացրել է իր հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի գործադիր տնօրեն Լարիսա Մինասյանին, որը և պատմել է կրթության, արվեստի, արդարադատության, ԶԼՄ և այլ ոլորտներում ծրագրերի հաջող իրականացման մասին: Նա նշել է նաև, որ բացի Սորոսի ֆինանսական աջակցությունից, մասնաճյուղը ստացել է նաև ֆինանսական օժանդակություն բրիտանական և գերմանական կառավարություններից: «Մեր նպատակն է տարաբնույթ ճանապարհներով դեմոկրատիայի հաստատումը Հայաստանում: Մենք ձգտում ենք իրականացնել պարբերական փոփոխություններ տարբեր ոլորտներում և հասնել հաջողության»,- ասել է Լ.Մինասյանը:

Բաց հասարակության ինստիտուտի խորհրդի անդամ Լուսիկ Դանիելյանն ընդգծել է մի քանի կազմակերպչական օբյեկտիվություններ և ներկայացրել իր մոտեցումները Հայաստանում առկա խնդիրների վերաբերյալ: «Մենք հզորացնում ենք մարդկանց, տալիս ենք որոշակի հմտություններ, ֆինանսավորում ենք, երբ դա անհրաժեշտ է, որպեսզի խթանենք փոփոխությունները ներքևից»,- ասել է նա:

Վիգեն Սարգսյանն (Բաց հասարակության ինստիտուտի և Երևանում Համաշխարհային բանկի խորհրդի անդամ) անդրադարձավ դեմոկրատական բարեփոխումների համար Հայաստանում առկա խոչընդոտներին՝ հատկապես ԶԼՄ ոլորտում: Նա ասաց. «Հայաստանյան ԶԼՄ-ն տառապում են միատարրությամբ՝ պետական գերակայության պատճառով, որն էլ այլակարծություն չի ապահովում»:

Ներկաները խոսեցին ժողովրդավարացման և տնտեսական աճի փոխկապվածության մասին, քննարկման ընթացքում հնչեցին տարբեր առաջարկներ: Մասնակիցները մատնանշեցին իրենց անելիքները կայուն և ուժեղ Հայաստան կառուցելու համար:

Հետագա քննարկման ընթացքում շոշափվեցին Հայաստանից շարունակվող արտագաղթի, հարևանների հետ հարաբերությունների, շրջափակման, պետական և մասնավոր սեկտորում իշխող կոռուպցիայի և այլ հարցեր:

Ջորջ Սորոսը նշեց, որ հայկական սցենարն ունիկալ է, քանի որ Հայաստանն ունի Սփյուռք, որը կարող է ուժեղ ներգործություն ունենալ բարեփոխումների ընթացքի վրա, և որ Հայաստանի օրինակը նման չէ եվրասիական այլ երկրների սցենարներին:

Հանդիպման ավարտին Հայկական բարեգործական ընդհանուր միության նախագահ Պերճ Սեդրակյանը շնորհակալություն հայտնեց Ջ.Սորոսին հրավերն ընդունելու համար: «Այս գործընթացը միայն սկսված է, և մենք պետք է շարունակենք մեր երկխոսությունը: Տեղեկանալով Հայաստանում Ջ.Սորոսի հիմնադրամի գործունեության հաջողությունների մասին՝ մենք ոգեշնչվեցինք: Այսուհետ մենք մեր ներդրումները կունենանք Հայաստանում քաղաքացիական հասարակության կառուցման գործում, կաշխատենք նոր ուղիներ և հնարավորություններ փնտրել նպատակին հասնելու համար: Որպես հայկական խոշոր ոչ կառավարական կազմակերպություն՝ ՀԲԸՄ-ը պատասխանատու է զգում նոր ուղիներ որոնելու և նպաստելու Հայաստանի ու հայության հզորացմանը»,- նշել է Պերճ Սեդրակյանը:

УСИЛЕНИЕ КУРДСКОГО ФАКТОРА И АРМЕНИЯ

Вашингтон усиливает свою работу в направлении формирования курдского регионального фактора. 26 сентября Сенат США принял резолюцию, которая ратует за федерализацию Ирака, фактически призывая разделить страну на три части: курдскую, шиитскую и суннитскую.

Курдские лидеры с восторгом приняли решение Сената, однако шииты и сунниты приняли его в штыки, так как лидеры этих двух конфессиональных групп отлично понимают, что это очередной шаг в направлении развала Ирака на три отдельных государства. Так, вице-президент Ирака Адил Абдул-Махди (суннит) высказался резко против резолюции, обвинив американцев в попытке вмешательства во внутренние дела страны – попытке, направленной против конституции Ирака.

Дело в том, что суннитские и шиитские области представляют собой искусственные образования – точно так же, как и сам Ирак был в свое время был создан искусственным образом, и они незамедлительно подпадут под влияние соседей и в лучшем случае превратятся в марионеточные государства. А с Курдистаном все обстоит с точностью до наоборот. Курдское де-факто существующее государство постепенно прибирает к рукам все действующие в регионе курдские движения. Разделение Ирака на три автономии еще больше уменьшит влияние центра и ускорит процесс окончательного распада страны. В свете этого Эрбиль в ближайшее время сможет претендовать на роль серьезного регионального игрока. И не только за счет огромных нефтяных денег, которые будут притекать в Курдистан, но более – за счет курдского фактора, который задействован в Турции, Иране и Сирии.

Курдские власти в Ираке развернули весьма активную деятельность, показывая, что де-факто они являются единственной организованной силой. На данный момент между Багдадом и Эрбилем разворачивается конфликт вокруг экспорта из страны нефти и газа. Власти Курдистана идут на сепаратные договренности с иностранными компаниями о вывозе энергоно-сителей, что по мнению центральных властей является нарушением договоренностей. Иракское министерство нефти грозит санкциями компаниям, ведущим сепаратные переговоры с Курдистаном. При этом в Эрбиле считают, что действуют законно.

В то же время курдские пешмерга, выйдя за территорию Курдистана, взяли под контроль Мосул и Киркук, то есть спорные регионы, вопрос принадлежности которых предстоит еще решать во время референдума. Эрбиль заявляет, что пешмерга не совершали интервенции, а всего лишь обеспечивают безопасность перед плебисцитом. Напомним, что в этих богатых нефтью районах в ближайшее время пройдет референдум, который должен решить их статус в составе Ирака. Курды надеются присоединить Мосул и Киркук к Курдистану. В Мосуле Курдистан имеют серьезные проблемы с суннитами, которые пытаются террором заставить курдов бежать оттуда, что ставит под угрозу планы Эрбиля по присоединению этого региона к своей автономии. Курды ведут активную работу также с ассирийцами Ирака, пытаясь ввести их территории на Ниневийской равнине, которые пока не имеют определенного статуса, под свой протекторат.

Анкара в свою очередь уже в открытую обвиняет американцев в поддержке курдского терроризма. На днях премьер-министр Турции Реджип Тайип Эрдоган, находясь с визитом в США, заявил, что на вооружении РКК (Курдская рабочая партия) находится тяжелое вооружение и танки американского производства. Вашингтон опровергает эту информацию. Пресс-секретарь госдепартамента США Том Кейси заявил: «Мы не знаем, откуда такие данные у Эрдогана. Очень трудно себе представить, как американские танки могут попасть в руки РКК. Мы не помогаем РКК. У нас нет никаких оснований считать заявление Эрдогана соответствующим реальности». В то же время в прессу уже не первый год просачивается информация об оказываемой американцми поддержке боевиков РКК.

Однако военные Курдистана, постоянно получающие военную помощь Вашингтона, который их считает наиболее верными союзниками в Ираке, обретают все большую поддержку. В курдских изданиях появились сообщения о том, что администрация Буша намерена создать на территории Курдистана постоянную военную базу. Сообщения последних дней говорят о том, что строительство базы секретно было начато еще с конца 2006 года. Ее предназначение – заменить базу в Турции (Инджирлик), так как события последних лет показали, что Турция является для американцев ненадежным союзником в тех военных вопросах, которые затрагивают национальные интересы Анкары.

Усиление курдов нервирует не только Турцию, которая уже который месяц грозится начать интервенцию в Курдистан, но и федеральные власти Ирака. На днях в Турции на уровне министров внутренних дел между Анкарой и Багдадом было подписано антикурдское соглашение. Была достигнута договоренность о совместной антитеррористической деятельности: борьба с политической и финансовой деятельностью курдских организаций, возможность экстрадиции боевиков и т.д. Основным объектом борьбы, естественно, является Курдская рабочая партия. Анкара надеялась подписать более серьезный документ, однако в последний момент вмешательство Эрбиля, возмущенного действиями Багдада, снизило эффект соглашения. Не был подписан основной пункт, которого добивалась Турция. Анкара намеревалась добиться тех же условий, которые имелись во времена правления Саддама: возможность преследования курдских боевиков на территории Ирака без уведомления властей страны. Позиция турецкой стороны ясна – заранее сообщив о военной операции против РКК, они тем самым информируют власти Курдистана, которые негласно взяли РКК под свою опеку.

Курды сейчас активизируются во всех странах региона, где имеют крупные общины. К примеру, в Турции боевики Курдской рабочей партии провели карательную акцию. Остановив автобус, они, проверив документы пассажиров, расстреляли 12 человек, еще двое в тяжелом состоянии были перевезены в больницу. Жертвами стали курды-коллаборационисты, члены Сельской гвардии, которая вооружается Анкарой в борьбе против РКК. Ранее в самой Анкаре турецким спецслужбам удалось предотвратить подрыв автобуса. Столкновения армии с боевиками РКК на курдонаселенных территориях Турции продолжаются практически ежедневно. В то же время расстрел коллаборационистов говорит о том, что среди курдов идет процесс отделения сил, готовых пойти на радикальные меры для создания большого Курдистана.

За последние несколько дней зафиксирован ряд нападений на иранских военнослужащих и стражей Исламской революции. Атаки совершаются боевиками *PJAK* (Партия свободной жизни Курдистана, близкая к Курдской рабочей партии) на границе Ирака, Ирана и Турции. Иранская армия несет довольно ощутимые потери, в ход идет артиллерия. Не исключено, что все действия руководятся из Эрбиля и вдохновляются Вашингтоном.

Последствия для Армении

На сегодняшний день в армянском обществе действует стабильная ассоциация: враг моего врага – мой друг. В этом плане вся деятельность курдов, направленная против Турции, воспринимается как выгодная для Армении. В действительности надо учитывать, что курды имеют территориальные претензии не только к областям Западной Армении, но и к Республике Армения. В интернете активно распространяются карты Курдистана, в которые включены также и регионы РА.

Кроме того, консолидация курдских движений вокруг Эрбиля может привести к реорганизации курдских радикальных движений, которые находились в противостоянии друг к другу, многие были на стадии полураспада. В этом плане следует ожидать усиления эмиссарской деятельности и на территории Армении. Сегодня курдские издания ведут целенаправленную деятельность с езидами, выдвигая тезис об их принадлежности к общему курдскому делу. Не исключено, что в этом направлении Армения может оказаться под пристальным вниманием курдских лидеров, которые попытаются рекрутировать местных езидов. В интернете уже заме-

чается усиление внимания курдов к армянским сетевым сообществам, где они активизируются, «лоббируя» курдскую тему.

Тем самым Армения может оказаться вовлеченной в чужую игру, что само по себе чревато внутренней дестабилизацией и даже усилением сепаратистских тенденций. Учитывая тот факт, что езиды являются единственным слабым национальным звеном Армении, они могут стать также целью для работы по дестабилизации ситуации в Армении со стороны спецслужб Турции, Азербайджана и других стран. В пользу этого свидетельствует, например, ряд дезинформационных публикаций в азербайджанской прессе, направленных на разжигание вражды между армянами и езидами.

Надо также учитывать, что на сегодняшний день Вашингтон делает ставку на замещение курдами части функций Турции по влиянию в регионе. В этом плане курдский фактор надо рассматривать в свете продолжения турецкого фактора американской политики в регионе – со всеми вытекающими последствиями. В частности, курды, как и турки – в отличие от многих народов региона – ставят национальное выше религиозного. В связи с чем мало подвержены влияния исламских центров региона – таких, как Иран или Саудовская Аравия. При этом у курдов нет таких глобальных интересов, как у Анкары, имеющей направленность на все тюркоязычные области. В этом плане интересы курдов локализованы на Ираке, Иране, Турции, Сирии, где они компактно проживают, а также на Армении и Азербайджане. В связи с этим они представляют из себя потенциально наиболее контролируемое и в то же время эффективное орудие для Вашингтона. Надо также учитывать, что на данный момент курдские организации, даже марксистская Курдская рабочая партия, рассматривают США как своего единственного союзника.

Учитывая невероятное воодушевление курдов в связи с практически уже состоявшимся созданием курдского государства, за которое они боролись с оружием в руках в течение десятилетий, сейчас следует ожидать на фоне национального подъема активизации деятельности курдских группировок по всему периметру того Курдистана, на который замахиваются лидеры курдов. В ближайшее время, когда будет решаться вопрос референдума в Киркуке и других приграничных с Курдистаном областях, следует ждать обострения ситуации. После этого курдские власти начнут уже вовсю работать в направлении отделения от Ирака. И тогда курдский фактор, сила и слабость которого – в распыленности на Ближнем Востоке, даст о себе знать гораздо активнее. После этого курдские лидеры начнут намного активнее работать на экспансию в соседние страны, часть территорий которых они считают принадлежащими Курдистану.

В данном случае также и Армения оказывается под угрозой.

ԱՄՆ ՀՐԵԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՀԱՐՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ

ԱՄՆ հրեական միությունների և Իսրայել պետության դիրքորոշումներում նկատելի է որոշակի դինամիկա Հայոց ցեղասպանության հարցում: Թեև առկա դրությամբ ԱՄՆ հրեական կազմակերպությունների զգալի մասը դեռ չի միացել ցեղասպանության ճանաչման արշավին և Իսրայել պետությունը չի ճանաչել Հայոց ցեղասպանությունը՝ այդուհանդերձ, նպատակահարմար է թվում արձանագրել առկա փոփոխությունները՝ ուսումնասիրելով նաև պատասխան գործողությունների տարբերակները:

Ս.թ. օգոստոսի 21-ին *ADL*-Ընդդեմ խտրականության լիգա կազմակերպության հայտնի հայտարարությունից հետո հարցը մտավ «իսրայելական» օրակարգ: Ընդդեմ խտրականության լիգան ԱՄՆ ամենահին հրեական միություններից մեկն է, հիմնադրվել է 1911թ.: Այնուհանդերձ, ամենաազդեցիկ հրեական կառույցները պետք է համարել ԱՄՆ-Իսրայել հասարակական հարաբերությունների կոմիտեն *(AIPAC -American Israel Public Affairs Commitee),* ԱՄՆ հրեական կոմիտեն *(AJC - American Jewish Commitee),* ԱՄՆ հրեական կոնգրեսը *(American Jewish Congress),* Բնայի Բրիթը *(B'inai B'rith):* Վերջիններիս մոտեցումները Հայկական հարցին առավել խուսափողական են, թեև նախորդ տարիների համեմատ առաջընթաց նկատելի է:

AIPAC կազմակերպությունը ստեղծվել է 1951թ., ունի տարեկան մոտ $30 մլն բյուջե, 55 հազար անդամ, շուրջ 100 հազար համակիր: Կառույցի կայքէջում նշվում է, որ «ԱՄՆ հրեական լոբբիստական միությունների առաջատարն է»: Մերտ հարաբերությունների մեջ է Ներկայացուցիչների պալատի առնվազն 260 անդամների (ընդհանուր թիվը՝ 435) և 71 սենատորների (ընդհանուր թիվը՝ 100) հետ: Կազմակերպության կայքէջում առանձին բաժին նվիրված է Թուրքիա-Իսրայել հարաբերություններին: Դրանում հիմնականում դրականորեն է խոսվում Թուրքիայի մասին, նաև նշվում է, որ 2004թ. Ռեջեփ Էրդողանն իր ելույթում խիստ քննադատության է ենթարկել Իսրայելին, ինչը, հավանական է, Թուրքիային ուղղված ազդանշան է՝ «սխալները չկրկնելու համար»: Կառույցի անդամները հայտարարում են, որ դեմ են Կոնգրեսում Եղեռնի վերաբերյալ օրինագծին, բայց ցեղասպանության պատմական փաստը հերքելու հայտարարությունից խուսափում են: Ըստ ԱՄՆ հրեական կոնգրես կազմակերպության կայքէջի տեղեկությունների՝ *«AIPAC-ը* չեզոքություն է պահպանելու: Նրանք գտնում են, որ հարցը հակասական է և չի առնչվում Իսրայելի շահերին»:

AJC-«ԱՄՆ հրեական կոմիտե» կառույցը ձևավորվել է 1906թ.՝ Ռուսաստանում այդ ժամանակաշրջանում հակահրեական «պոգրոմների» խնդրում համապատասխան քարոզչություն և օժանդակություն կազմակերպելու նպատակով: 2006թ. կազմակերպության 100-ամյակի միջոցառումների տոնակատարությանը մասնակցում էր նաև պատվիրակություն Ադրբեջանից՝ Արտասահմանում բնակվող ադրբեջանցիների հետ աշխատանքային պետական կոմիտեի ղեկավար Նազիմ Իբրահիմովի գլխավորությամբ: Միջոցառմանը ներկա էին նաև ԱՄՆ նախագահը, Իսրայելի վարչապետը և Գերմանիայի կանցլերը: Կառույցը 31 գրասենյակ ունի ԱՄՆ-ում, 8-ը՝ Միացյալ Նահանգներից դուրս (Իսրայել, Բելգիա, Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա, Շվեյցարիա, Լեհաստան, Հնդկաստան): Կառույցի ղեկավար Դևիդ Հարիսը «Ջըրուսալեմ փոստին» տված հարցազրույցում նշել է, որ «կողջուներ յուրաքանչյուր թուրքի, ով կընդուներ Հայոց ցեղասպանության փաստը»: Կառույցը ևս ընդդիմանում է Մեծ եղեռնի ճանաչմանը Կոնգրեսում: Հարիսի խոսքերով՝ *AJC-ն* պատրաստ է աջակցել հայ-թուրքական երկխոսությանը:

ԱՄՆ ազդեցիկ հրեական միություններից է ԱՄՆ հրեական կոնգրեսը: Կազմակերպության մոտեցումը ևս միանշանակ թուրքանպաստ համարել չի կարելի: Կառույցի կայքէջում նշված է, որ օրինագծի հաստատման հավանականությունն աճել է Ներկայացուցիչների պալատի խոսնակ Փելոսիի և հրեական կառույցների պասիվ մոտեցման պատճառով: «Մեծ թվով հրեական միություններ ցեղասպանության ճանաչման կողմնակիցն ու մերժողականության

ընդդիմադիրներն են»,- նշված է կայքէջում: Հրեական կոնգրեսը գրում է Հենրի Մորգենթաուի հուշերի, Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» գրքի մասին: Կառույցը Հայոց եղեռնի ճանաչման կողմնակից չէ, բայց այս հաղորդագրության «տողատակում» ակնհայտ նկատվում է, որ ընդունում են պատմական իրողությունը:

Միացյալ Նահանգներում ազդեցություն ունի նաև Կանադայում գործող Բնայի Բրիթ միությունը: Հատկանշական է, որ դեռևս 2000թ. դեկտեմբերին Բնայի Բրիթի այն ժամանակվա ղեկավար Հեյդերմանը հայտարարել էր, թե հրաժարվում է Մեծ եղեռնի օրինագծերի դեմ պայքարում սատարել Թուրքիային, սակայն հետագա տարիներին Անկարային հաջողվեց «հետ շահել» նշված կառույցի «բարեհաճությունը»: Թուրքական կողմը, բացի աշխարհաքաղաքական թեմաների շահարկումից, լայնորեն կիրառում էր նաև ԱՄՆ-ում թուրքական դիվանագիտական կառույցի կազմակերպած միջոցառումներին հրեական տարբեր միությունների ներկայացուցիչներին հրավիրելու, անձնական ջերմ շփումներ հաստատելու գործելաոճը:

Ներկայումս ԱՄՆ-ում գործող «Սիմոն Վիզենտալ» կազմակերպության Իսրայելի գրասենյակի ներկայացուցիչը ևս հայտարարել է, որ իրենք ճանաչում են Մեծ եղեռնի փաստը: Իսրայելի «Ակադեմիական քոլեջ» հաստատությունից Դով Շինարը թուրքական «Բիանեթ» էլեկտրոնային կայքին հայտարարել է. «Իսրայելը պետք է ընդունի Հայոց ցեղասպանության փաստը և նույնը սպասում է նաև Թուրքիայից»: Նա նաև նշել է, որ մերժողականությունը Թուրքիային որևէ օգուտ չի տալիս: Շինարի խոսքերով՝ ԱՄՆ-ում հրեական միությունների սկսած վերջին շարժումը Իսրայելից հրահանգված չի եղել: «Ջերուսալեմ փոստի» օգոստոսի 27-ի հրապարակման մեջ ևս նշվում է. «Իսրայելի իշխանությունները ձգտում են համոզել Թուրքիայի իրենց գործընկերներին, որ Իսրայելը չի կազմակերպել հրեական միությունների կողմից հայտարարությունները և Իսրայելը չի վերահսկում ԱՄՆ հրեական միությունները»: Մինչդեռ Իսրայելում Թուրքիայի ներկայիս դեսպան Նամիկ Թանը հրաժարվել է ընդունել այս փաստարկները: Վերջինս Թուրքիայի փորձառու դիվանագետներից մեկն է, մինչև վերջին նշանակումը եղել է Թուրքիայի ԱԳՆ մամուլի խոսնակը, ավելի վաղ աշխատել է ԱՄՆ-ում Թուրքիայի դեսպանատանը: «Ջերուսալեմ փոստն» այս առիթով նշում է. «90-ականներին Թանը 2 ժամկետ ծառայել է Վաշինգտոնում և սերտորեն աշխատել ԱՄՆ հրեական միությունների հետ Հայկական հարցով: Նա նշում է, որ Իսրայելն այդ ընթացքում ցույց է տվել, որ ունակ է Հայկական հարցում վերահսկել իր կազմակերպությունները»: «Ջերուսալեմ փոստ» թերթին տված հարցազրույցում Թանը հույս է հայտնել, թե Իսրայելը կաշխատի հրեական կառույցների հետ, որպեսզի Կոնգրեսում փաստաթուղթը չհաստատվի: «Թեև ԱՄՆ հրեական միությունները ԱՄՆ կազմակերպություններ են, բայց նաև գիտենք, որ դրանք Իսրայելի հետ են համակարգում իրենց գործունեությունը»,- նշել է թուրք դիվանագետը, ինչին, ըստ թերթի, Իսրայելի պաշտոնյաներից մեկը պատասխանել է. «Լինում են դեպքեր, երբ Իսրայելը շատ բան չի կարող անել, և սա այդ դեպքերից մեկն է»:

Անկարան այս աշխատանքում ներգրավել է նաև Թուրքիայի քաղաքացի հրեաներին: Ստամբուլում բնակվող գործարար Ջեկ Քամիին նամակ է հղել Ընդդեմ խտրականության լիգայի անդամներին և ԱՄՆ հրեական միություններին Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում Թուրքիային սատարելու կոչով: Օրինագծի աջակիցներից մեկը՝ ազգությամբ հրեա, Նյու Յորքից Ներկայացուցիչների պալատի անդամ ընտրված դեմոկրատ Հարի Աքերմանը, նշել է, որ Թուրքիայի հրեաներն իրեն ևս դիմել են Եղեռնի վերաբերյալ դիրքորոշումը վերանայելու հարցով: «Նրանք խնդրում էին, որ հարցը կարգավորվի ոչ թե Կոնգրեսում, այլ ուրիշ հարթությունում»,- նշել է Աքերմանը:

Նույն «Ջերուսալեմ փոստ» հանդեսում հրապարակվեց նաև Վաշինգտոնում Իսրայելի դեսպանատան նախկին խորհրդական Լենի Բեն Դևիդի «Հայերը երկուսուկես միլիոն մահմեդական և հրեաների են ոչնչացրել» խորագրով հոդվածը: Վերջինս մինչև 2007թ. հունիս ամիսը ԱՄՆ-ում Թուրքիայի դեսպանատան խորհրդականն է եղել: Նա ԱՄՆ հրեական միություններին և ԱՄՆ կառավարությանը հայկական հարցում աչալրջություն ցուցաբերելու կոչ էր անում: Բեն Դևիդի խոսքերով՝ 1914-20թթ. հայերը ոչնչացրել են երկուսուկես միլիոն (!) մահմեդականների, իսկ 1918-ի ընթացքում սպանվել են 3 հազար հրեաներ Ադրբեջանի Ղուբայի շրջանում:

Հետաքրքրական է նաև Իսրայելի առողջապահության նախարար Յակով Բեն Յիզրիի

վերջին հայտարարությունը: Նա նշել է, որ հրեա ժողովուրդն առանձնահատուկ համակրանք և հարգանք ունի հայ ժողովրդի հանդեպ, քանի որ հայերը ևս ենթարկվել են ջարդի: «Իսրայելի կառավարությունը երբևէ չի մերժել 1915թ. տեղի ունեցած սարսափելի կոտորածները և հասկանում ու կիսում է հայ ժողովրդի զգացումները, քանի որ հաշվի է առնում զոհերի թիվն ու հայերի կրած սարսափելի կորուստները»,- նշել է Բեն Յիզրին: Հատկանշական է, որ վերջինս հայտարարությունն արել է արձակուրդում գտնվող արտգործնախարար Ցիպի Լիվնիի անունից:

Իսրայելի նախագահ Շիմոն Պերեսը ևս անդրադարձել է խնդրին՝ նշելով, որ հարկավոր է անցյալը համատեղ ուսումնասիրելով նայել ապագային: Նա ևս դեմ է հանդես գալիս Մեծ եղեռնի վերաբերյալ Կոնգրեսի օրինագծին: Նրա դիրքորոշման մեջ, թերևս, նույնպես ինչ-որ տեղաշարժ առկա է, քանի որ 2002թ. Պերեսը հրապարակայնորեն մերժել էր Հայոց եղեռնի փաստը: Գործնականում ցեղասպանության մերժողականությունն անընդունելի է դառնում միջազգային շրջանակներում, ինչը լուրջ հիմքեր է ստեղծում հայկական կողմի համար՝ ճնշումն ուժեղացնելու առումով:

Հայկարամ Նահապետյան

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ՝ ՆՎԻՐՎԱԾ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻՆ

2007թ. սեպտեմբերի 24-29-ը Ավստրիայի Զալցբուրգ քաղաքում անցկացվեց Բարեփոխումների խմբի 12-րդ կոնֆերանսը՝ նվիրված էներգետիկ անվտանգության և քաղաքականության հիմնախնդիրներին: Այն այս տարի անցավ *«British Petroleum»*, *«Statoil»* նավթային ընկերությունների, Գերմանիայի բնապահպանության նախարարության և *«Berlin Energy Consultants»* խորհրդակցական կազմակերպության հովանու ներքո: Կոնֆերանսի մասնակիցների շարքում էին աշխարհի 20 երկրների փորձագետներ և պետական մարմինների ներկայացուցիչներ: Ներկայացնում ենք կոնֆերանսում քննարկված և հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցեր:

Ռուսաստանի գործոնի կարևորության մեծացում և նույնացում ԱՄՆ-ի հետ

Էներգետիկ անվտանգության հարցերին նվիրված քննարկումների ժամանակ հիմնական ուշադրությունը, ինչպես և անցյալ տարվա կոնֆերանսի ընթացքում, կենտրոնանում էր Ռուսաստանի էներգետիկ և քաղաքական գործոնի դիտարկմանը միջազգային էներգետիկ անվտանգության համատեքստում: Այս տարի, սակայն, Ռուսաստանի՝ որպես 21-րդ դարի աշխարհաքաղաքական առանձին միավորի, ընկալումը և դրանից բխող հետևանքներն ընդգծված ուշադրության արժանացան: Սա ավելի քան ակներև էր այն ժամանակ, երբ քննարկվում էին ԵՄ էներգետիկ անվտանգության հիմնախնդիրները, որոնց զգալի մասը նվիրված էր Ռուսաստանից էներգետիկ կախվածության վերացման անհրաժեշտությանը: Փաստորեն, ցանկացած էներգետիկ նախագծի իրականացման քննարկումները տեղի են ունենում՝ հաշվի առնելով դրանցում Ռուսաստանի մասնակցության հնարավորությունները և ձևերը:

ԵՄ երկրները ներկայացնող մի շարք փորձագետներ (հիմնականում Գերմանիայից և Ֆրանսիայից) Եվրոպայի էներգետիկ անվտանգությանն սպառնացող գործոն էին համարում «մեծ աշխարհաքաղաքականությունը», և այստեղ Ռուսաստանի կողքին, որպես տարածաշրջանի անվտանգությանը սպառնացող խաղացողներ, հայտնվում էին Չինաստանը և ԱՄՆ-ը: Վաշինգտոնից եկող հիմնական սպառնալիքներն, ըստ վերլուծաբանների, ԱՄՆ Մերձավոր Արևելքի հետագա վերաձևափոխման ծրագրերն են, որոնք, ինչպես ընդգծեց *«Berlin Energy Consultants»* կազմակերպությունը ներկայացնող վերլուծաբանը, չեն փոփոխվելու Ջ.Բուշի պաշտոնավարման ավարտից հետո և Հ.Քլինթոնի հավանական հաղթանակի դեպքում: Նշենք, որ վերջինիս հաղթանակը կասկածից դուրս է համարվում ԱՄՆ և ԵՄ ակադեմիական շրջանակների համար: Մասնավոր քննարկումների ընթացքում կարծիք հայտնվեց, որ 2009-ից ԱՄՆ Մերձավոր Արևելքում քաղաքականության հիմնական մաս է դառնալու պետությունների տրոհման գործընթացների պաշտպանությունը և հրահրումը ԱՄՆ-ի կողմից: Սա, իր հերթին, անուղղակիորեն սպառնում է ԵՄ շահերին, քանի որ պետությունների տրոհումը հարուցելու է էներգակիրների մատակարարման հնարավոր կասեցումներ և ԱՄՆ ռազմական ներկայություն հիմնականում էներգակիրների տարանցման ուղիների շրջանում, որոնք են Հորմուզն ու Սուեզը և Թուրքիայի հարավը:

Որոշ վերապահումներով կարելի է ասել, որ ԱՄՆ-ից և Ռուսաստանից եկող մարտահրավերները գրեթե նույնացվում են ԵՄ-ում, ինչը, սակայն, բավարար չափով չի արտացոլվում եվրոպական տեղեկատվական դաշտում:

Հարավային Կովկասը և Կենտրոնական Ասիան որպես նոր անկայունության գոտիներ

Կոնֆերանսի օրերից մեկը նվիրված էր Կասպյան և Կենտրոնական Ասիայի հիմնախնդիրներին: Հիմնականը ԵՄ-ի համար այս տարածաշրջանների «կորուստն» էր՝ որպես էներգետիկ ռեսուրսների կայուն մատակարարման գոտիների, ինչն արդյունք է Չնաստանի և Ռուսաստանի ակտիվացման: Այժմ ԱՄՆ ներկայությունն այս կամ այն տարածաշրջանում ԵՄ փորձագետների կողմից չի նույնացվում Եվրոպայի ազդեցության կամ ներկայության հետ: Հենց այս մոտեցմամբ էլ դիտարկվում էին զարգացումներն Ադրբեջանում, ինչպես նաև Թուրքմենստանում, որը, կարծես թե, եվրոպական վերլուծական շրջանակներում սկսում է ընկալվել որպես մի պետություն, որն ապագայում լրջորեն կկրի չինական տնտեսական, քաղաքական գերակայությունը:

Կարծիք հայտնվեց, որ Ադրբեջանը դեռ երկար ժամանակ ԵՄ-ի համար չի կարող վերածվել էներգակիր արտահանող կարևոր երկրի, քանի որ դեռևս պարզ չ՝, թե ինչպես են ընթանալու զարգացումները Ղազախստանում, ռուս-ղազախական և ղազախա-չինական հարաբերություններում: Նշենք, որ ղազախական նավթի արտահանումը կարևոր է Ադրբեջանի համար:

Հարավային Կովկասի գծով մասնագետ, Գերմանիայի խորհրդարանի նախկին պատգամավոր Դիտրիխ Սպերլինգը քննարկումների ժամանակ նշեց, որ մոտակա տարիներին գնալով ավելանալու է Վրաստանում նոր քաղաքացիական հուզումների վերսկսման հնարավորությունը: Խոսքն, առաջին հերթին, Հարավային Օսիայի հետ Թբիլիսիի հարաբերությունների մասին է, որոնք Մ.Սահակաշվիլու հեղինակության անկման պարագայում կարող են Վրաստանի նախագահի կողմից ուղղորդվել ռազմական ընդհարման: Նույն Սպերլինգի կարծիքով (որը նա արտահայտեց մասնավոր խոսակցության ժամանակ) լուրջ զարգացումներ կարող են տեղի ունենալ Աբխազիայի հայկական համայնքի հետ կապված, եթե հանկարծ սկսվի վրաց-աբխազական ռազմական բախում: Ըստ նրա՝ Աբխազիայի հայկական համայնքի տնտեսական ռեսուրսի վերաբաշխման անհրաժեշտության մասին շատ են խոսում աբխազական ընտրանու մի շարք ներկայացուցիչներ, որոնք կապ ունեն Թուրքիայի հետ և հանդես են գալիս ազգայնական գաղափարներով: Պատերազմը նրանց կարող է հարմար առիթ ընձեռել թե՛ իշխանության զավթման, թե՛ իրենց ծրագրերի իրականացման համար:

Թուրքիային վերաբերող հարցեր

«British Petroleum» նավթային ընկերության քաղաքական հարցերով խորհրդական Էննո Հարքսը իր ելույթում նշեց, որ վերջին շրջանում կտրուկ նվազել են Թուրքիայի՝ իրանական և իրաքյան գազի արտահանման հիմնական տարանցիկ պետության վերածվելու հնարավորությունները: Սա բացատրվում է նրանով, որ *«British Petroleum», «Total», «RuhrGas»* ընկերությունները որոշում են կայացրել ԵՄ տարածքում լայնորեն զարգացնել *LNG* գազի ներկրման համար անհրաժեշտ տեխնոլոգիաները և ներդրումային էքսպանսիա սկսել Մերձավոր Արևելքի գազի ոլորտում: Արդյունքում՝ Պարսից ծոցի երկրներում հիմք կստեղծվի գազի հեղուկացման տեխնոլոգիաների զարգացման համար, ինչը կհանգեցնի գազատարային ճանապարհով արտահանման նշանակության նվազման:

Միևնույն ժամանակ, գերմանական ընկերությունները մոտակա ամիսների ընթացքում որոշում կկայացնեն սկսել «Նաբուքքո» նախագծի իրականացման ֆինանսավորմանը մասնակցելու մասին: Սակայն «Նաբուքքոն» պետք է դառնա հիմնականում թուրքմենական և եգիպտական գազի արտահանում ապահովող նախագիծ՝ քիչ առնչություն ունենալով իրանական, իրաքյան, սաուդյան գազի արտահանման գործընթացի հետ:

Փոքր շեղում. Գերմանիայի իրանական համայնքը ներկայացնող և էներգետիկ հարցերի գծով մասնագետ Բահրուզ Աբդոլվանդը մասնավոր զրույցի ժամանակ ասաց, որ վերջին մեկ տարվա ընթացքում ակտիվացել է Իրանի հայերի արտագաղթը Գերմանիա, ինչը պայմանավորված է Իրանի դեմ հնարավոր պատերազմի երկյուղով։ Ըստ Աբդոլվանդի՝ Իրանի հայերը համեմատաբար ավելի դյուրին են ստանում Գերմանիա մուտքի իրավունք, քան իրանցի քաղաքացիները։

Սնակ Սարուխանյան
«Նորավանք» հիմնադրամ

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՆԱՎԹԱՅԻՆ ՍԵԿՏՈՐԸ ՍՊԱՌՆՈՒՄ Է ԵՐԿՐԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆԸ

Նավթային սեկտորի զարգացումը և միջազգային շուկաներում այդ հումքի գնի աննախադեպ աճը Ադրբեջանի տնտեսությանը զարգացման ֆանտաստիկ տեմպ են հաղորդել, ինչն էլ մի շարք միջազգային կառույցների կողմից այդ երևույթի ու նրա հետևանքների ուսումնասիրման պատճառ է դարձել: Այս կառույցների ուսումնասիրություններն էականորեն տարբերվում են այն բարձրագոչ հայտարարություններից, որոնք հնչում են Ադրբեջանի ղեկավարության կողմից երկրի զարգացման ու նրա հզորացման մասին: Այսպես, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը (ՎԶԵԲ) հրապարակել է Ադրբեջանում ոչ նավթային սեկտորի վրա նավթային սեկտորի աճի ու տնտեսական բարձր ցուցանիշների ունեցած ազդեցության մասին: Ըստ ՎԶԵԲ-ի՝ նավթային սեկտորի ծավալը Ադրբեջանի Ներքին համախառն արդյունքի (ՀՆԱ) մեջ կազմում է մոտ 54%, իսկ արդյունաբերության արտադրության մեջ՝ 3/4-ը[1]: Նկատենք, որ դեռ 2006թ. նավթարդյունաբերության չափաբաժինը Ադրբեջանի Համախառն ներքին արդյունքի մեջ կազմում էր 41.3%, իսկ 2005-ին՝ 39.3%[2]: Այս թվերը պարզորոշ ցույց են տալիս Ադրբեջանի տնտեսության կախվածության մեծացումը նավթային սեկտորից, իսկ դա էլ, իր հերթին, հանգեցնում է ողջ երկրի կախվածությանը միջազգային նավթային սակարաններում գների տատանումներից: Այս պայմաններում, ըստ ՎԶԵԲ-ի մանագետների, խախտվում է երկրի մակրոտնտեսական կայունությունը: 2006թ. Ադրբեջանում ինֆլյացիան կազմել է 11.4% և մոտ 16% 2007թ. մարտի տվյալներով: Ադրբեջանում ընթացող նավթային բումին ակտիվ կերպով հետևում են նաև Արժույթի միջազգային հիմնադրամում (ԱՄՀ), որի ներկայացուցիչներն այս տարվա սեպտեմբերին պաշտոնական այցով գտնվում էին Բաքվում և մի շարք հանդիպումներ են ունեցել այդ երկրի տնտեսական ղեկավարների հետ: Ըստ ադրբեջանական մամուլի՝ քննարկումների հիմնական թեման է եղել պետական ներդրումային ծրագրերի կատարումը, պետական ներդրումների կառավարումը և սպառողական սղաճի հարցերը: Նկատենք, որ չնայած պետական ապարատը կանխատեսում էր տարեկան 9% սպառողական սղաճ, սակայն, ըստ միջազգային կառույցների, այն տարեկան կտրվածքով կկազմի մոտ 20-21%[3]: Արժույթի միջազգային հիմնադրամի ներկայացուցիչ Վիտալի Կրամարենկոն հույս է հայտնել, որ 2008թ. Ադրբեջանը կկարողանա նվազեցնել սղաճը երկրում: ՎԶԵԲ այս տարվա զեկույցում նշվում է, որ ադրբեջանական դրամի՝ մանաթի փոխարժեքի տարեկան իրական աճը, արդեն երկրորդ տարին անընդմեջ, կազմում է մոտ 10%, որը սպառնում է երկրի տնտեսության ոչ նավթային սեկտորի զարգացմանը, ինչը նաև Ադրբեջանում հոլանդական հիվանդության ախտանշան է: Ըստ բանկի փորձագետների՝ «Մենաշնորհ ունեցող ընկերությունները շարունակում են ճնշել մրցակցության ցանկացած փորձ, իսկ պետության՝ ոչ նավթային սեկտորում ներդրումների գործընթացում դերակատարում ունենալու փորձն անվստահություն է առաջացնում մասնավոր ներդրողների մոտ»[4]: Ադրբեջանում գրանցվել է սպառողական ամենաբարձր սղաճը ԱՊՀ-ում, ըստ ԱՊՀ Վիճակագրական վարչության՝ 2007թ. առաջին կիսամյակում գնաճն այդ երկրում կազմել է 8.8%: Համեմատության համար նշենք, որ երկրորդ տեղը զբաղեցնող Ռուսաստանում այն ընդամենը

---

[1] Р.Оруджев, *Азербайджан на грани экономического краха.* http://www.echo-az.com/archive/2007_08/1623/economica01.shtml

[2] ИА REGNUM., Ашот Егиазарян: *Азербайджан - нефтяной бум и макроэкономические тенденции..* www.regnum.ru/news/750542.html 05.12.2006

[3] Р. Алиев, *Итоги летней инфляции в Азербайджане и похвала МВФ.* «Новости-Азербайджан», 13 сентября 2007. http://www.newsazerbaijan.ru/

[4] Р.Оруджев, *Азербайджан на грани экономического краха.* http://www.echo-az.com/archive/2007_08/1623/economica01.shtml

5.7% է, նրան հետևում են Ղազախստանը և Ղրղզստանը, համապատասխանաբար՝ 4.6-ական տոկոս, ապա Ուկրաինան՝ 4.2%, Վրաստանը՝ 4.1%, Հայաստանը և Մոլդովան՝ 3.9-ական տոկոս և այլն[1]: Այս վիճակագրությունը պարզորոշ հուշում է, որ Ադրբեջանում առկա են հոլանդական հիվանդության բոլոր ախտանշանները: Նման տեսակետ կիսում են նաև ադրբեջանցի մասնագետները: Մասնավորապես՝ Ադրբեջանի նավթային հետազոտությունների կենտրոնի ղեկավար Իլհամ Շաբանի կարծիքով, «հոլանդական հիվանդության նշանները ոչ թե Ադրբեջանի տնտեսության շեմին են, այլ ներսում, և մենք բոլորս այն զգում ենք»[2]: Ըստ նրա՝ Ադրբեջանի տնտեսության համար օր օրի ավելի դժվար է դառնում մրցակցել երկրի ներքին շուկայում, որտեղ ներմուծվող ապրանքները դուրս են մղում տեղական արտադրողին, իսկ տեղական ապրանքները դառնում են ոչ մրցունակ դրսում: Ադրբեջանցի մեկ այլ փորձագետի՝ Ֆարհադ Օմարովի կարծիքով, ստեղծված իրավիճակի պատճառով, ամառային գնանկման փոխարեն այդ երկրում հակառակ միտումն է նկատվում: Նա նշում է, որ եթե այս տարվա օգոստոսին սղաճը կազմել է 0.8%, ապա գնաճը մթերային շուկայում՝ 1.3%, իսկ ոչ մթերային շուկայում՝ 0.4%[3]: Անցած տարվա օգոստոսի համեմատ՝ սղաճը կազմել է մոտ 16.1%, պնդում է Օմարովը: Այս պայմաններում Ադրբեջանը, որը դեռ Խորհրդային Միության գոյության տարիներին համարվում էր բանջարաբոստանային մշակաբույսեր արտահանող երկիր, վերածվում է նման մթերքներ ներմուծող երկրի: Այս իրավիճակը հատկապես պարզորոշ երևում է, երբ հետևում են այդ երկրի ոչ նավթային սեկտորի արտահանման ծավալներին: Այսպես, եթե 2004թ. Ադրբեջանի արտահանման ծավալում նավթագազային սեկտորը կազմել է ընդհանուրի 47.5%-ը, ապա 2005-ից այս իրավիճակը կտրուկ փոխվել է՝ հասնելով 90%-ի[4]: Ըստ այլ աղբյուրների՝ այս թիվը 2005թ. կազմել է 93%, և կանխատեսվում է, որ այն դեռ կշարունակի աճել[5]: 2004թ. Ադրբեջանի արտահանման ծավալում ոչ նավթային սեկտորը կազմել է մոտ $2 մլրդ, սակայն 2005թ. այն արդեն գնահատվում էր $766 մլն (տարբերությունը՝ 2.5 անգամ): Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ Ադրբեջանի տնտեսության և ընդհանրապես այդ պետության կախվածությունը նավթային հատվածից դառնում է կրիտիկական: Այդ երկրի պետական բյուջեի 50%-ը հավաքագրվում է ընդամենը նավթային երկու՝ Պետական նավթային և Ադրբեջանի միջազգային օպերացիոն ընկերություններից: Այս ընկերությունները միասին մուծում են նաև պետական հարկերի 75%-ը[6]: Երկրում առկա են հոլանդական հիվանդության բոլոր ախտանշանները, որի հաղթահարումը, ըստ արևմտյան փորձագետների դժվար է նաև այն պատճառով, որ Ադրբեջանում նավթային բումը կարճ կտևի և կավարտվի 2012-ին, որին կհետևի տնտեսական լուրջ ճգնաժամ[7]: Բացի այդ, երկրի ողջ տնտեսության կախվածությունը նավթի գներից և մի քանի ընկերություններից Ադրբեջանը խոցելի է դարձնում ոչ միայն տնտեսապես, այլ նաև քաղաքականապես:

Արմեն Մանվելյան

---

[1] ИА "Тренд" Статкомитет СНГ 10.08.2007

[2] Р.Оруджев, *Азербайджан на грани экономического краха.* http://www.echo-az.com/archive/2007_08/1623/economica01.shtml

[3] Р.Алиев, *Итоги летней инфляции в Азербайджане и похвала МВФ.* «Новости-Азербайджан», 13 сентября 2007. http://www.newsazerbaijan.ru/

[4] ИА REGNUM., Ашот Егиазарян: *Азербайджан - нефтяной бум и макроэкономические тенденции..* www.regnum.ru/news/750542.html 05.12.2006

[5] The Economist Intelligence Unit.,*Azerbaijan economy: Gone Dutch.,* March 7th 2007 http://www.viewswire.com/article881982473.html?pubtypeId=930000293&text=azerbaijan

[6] ИА REGNUM., *В 2007 году в бюджет Азербайджана от нефти поступит 3,059 млрд. долларов.*, www.regnum.ru/news/780393.html 09.02.2007

[7] The Economist Intelligence Unit.,*Azerbaijan economy: Gone Dutch.,* March 7th 2007 http://www.viewswire.com/article881982473.html?pubtypeId=930000293&text=azerbaijan

ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԵՆԱՐԱՆԸ

Թուրքիային, չնայած իր աշխարհիկ բնույթին, բնորոշ է իսլամական կառույցների, շարժումների, սուֆիական միաբանությունների և իսլամական տարաբնույթ աղանդների լայն ցանցը: Կրոնական հեղինակությունները որոշակի ազդեցություն ունեն Թուրքիայի ներկա քաղաքական դաշտում: Ներքաղաքական կյանքում այսօր կրոնական ուժերը համարվում են կարևոր գործոն:

Պատահական չէ, որ 2002-ից Թուրքիայում իշխանության եկած իսլամամետ Արդարություն և Զարգացում կուսակցության (ԱԶԿ) քաղաքական հենարաններից են մի շարք իսլամական ուժեր: Դրանցից է Նակշբանդի սուֆիական միաբանությունը, որ հիմնվել է դեռևս 14-րդ դարում Կենտրոնական Ասիայում՝ Թուրքեստանում, իսկ Անատոլիայում որոշակի կշիռ է ձեռք բերել արդեն 19-րդ դարում: Նակշբանդի միաբանությունից են սերում Թուրքիայում բավական ազդեցիկ մի շարք քաղաքական գործիչներ, ինչպես, օրինակ՝ նախագահ Աբդուլահ Գյուլը, պառլամենտի խոսնակ Բյուլենթ Արինջը, նախարար Մեհմեդ Ալի Սահինը (որոշ տվյալներով՝ նաև վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը):

Թուրքական Իսկենդերպասա քաղաքի Նակշբանդի միաբանության առաջնորդ Մեհմեդ Զահի Քոթքուի դպրոցն են անցել Թուրքիայի նախկին նախագահ և վարչապետ Թուրգութ Օզալը, նախկին վարչապետ Նեջմեդդին Էրբաքանը և նրա իրավահաջորդը՝ Իսլամական բարօրություն կուսակցության առաջնորդ Ռեջայի Քութանը: Իսկենդերպասայի միաբանության ներկայիս առաջնորդ Շեյխ Նուրեդդին Քոսանը հրապարակայնորեն պաշտպանել է ԱԶԿ-ին 2002-ի ընտրությունների ժամանակ: Նույն շեյխ Քոսանը կոչ է արել ԱԶԿ խորհրդարանական անդամներին 2003թ. մարտի 1-ին թուրքական խորհրդարանում դեմ քվեարկել ԱՄՆ-ի կողմից Թուրքիայի տարածքն Իրաքի դեմ պատերազմում օգտագործելու մասին որոշմանը: Հայտնի է, որ ԱԶԿ խորհրդարանական շուրջ 100 անդամներ ընդառաջ գնացին Նակշբանդիի քաղաքական որոշմանը:

Նեջմեդդին Էրբաքանի Իսլամական Միլլի Գյորուս շարժումը, որին ԱԶԿ-ն գաղափարապես մոտ է կանգնած, նույնպես բավական սերտ կապեր ունի Նակշբանդիի հետ: Թուրքական մամուլում շրջանառված տեսակետի համաձայն՝ միաբանության 80 նվիրյալ անդամներ ԱԶԿ հիմնադիրներից են:

ԱԶԿ իսլամական հենարանն են համարվում նաև Քադիրի, Սուլեյմանի և Մանզիլի աղանդները: Դրանք բոլորն էլ ԱԶԿ ցուցակով ունեն պառլամենտի անդամներ:

Առողջապահության նախարար Ռեջեփ Ակդաղը սերում է Մանզիլիից: Մանզիլիից են ԱԶԿ ցուցակով ընտրված խորհրդարանականներ Հուսերև Քութլուն և Բեյազիդ Դենիզօղլուն:

Ֆեթուլահ Գյուլենի շարժումը

ԱԶԿ իսլամական հենարանն է նաև Ֆեթուլահ Գյուլենի շարժումը, որը համարվում է Թուրքիայի ամենահզոր և ազդեցիկ իսլամական շարժումը և ներկայացված է նաև այդ երկրի սահմաններից դուրս: Նրա հիմնադիրը 1938թ. Էրզրումում ծնված կրոնական քարոզիչ, գրող և փիլիսոփա Ֆեթուլահ Գյուլենն է:

Շարժումը ձևավորվել է 1960-ականների սկզբներին՝ որպես սոցիալական շարժում: Այն մեծապես ներշնչվել է սուֆիականության, ինչպես նաև իսլամական տեսաբան և կրոնական հեղինակություն համարվող «Նուրսու» կամ «Նուր» («Լույս») շարժման հիմնադիր Սաիդ Նուրսիի (1877-1961) գաղափարներով:

1990-ականներին քաղաքական և տնտեսական փոփոխությունները Թուրքիայում, Սառը պատերազմի ավարտը, Թուրքիայից հարաճուն արտագաղթը դեպի Արևմուտք զգալիորեն

ձևափոխեցին շարժումը, և այն վերաճեց միջազգային իսլամական սոցիալական շարժման, որն ակտիվ է աշխարհի մի քանի տասնյակ երկրներում, ներկայացված է թե՛ Թուրքիայում, թե՛ Եվրոպայի թուրքական սփյուռքում, թե՛ Ամերիկայում և ասիական երկրներում: Աշխարհում առկա են շարժման հարյուրավոր դպրոցներ ու բջիջներ: Թուրքիայում Գյուլենի շարժման շրջանակներում գործում են բազմաթիվ կառույցներ, ասոցիացիաներ, նրանց է պատկանում *Today's Zaman* թերթը, հեռուստատեսության և ռադիոյի եթերներ: Թե՛ ԱՄՆ-ում, թե՛ Եվրոպայի համալսարաններում մի շարք հայտնի և սկսնակ հետազոտողներ զբաղվում են Գյուլենի շարժման, դրա գաղափարախոսության և նպատակների ուսումնասիրության խնդիրներով, այդ ուղղությամբ կազմակերպվում են միջազգային կոնֆերանսներ, սեմինարներ, ֆորումներ:

Պատահական չէ, որ Գյուլենի շարժման կարևոր բաղադրիչն են կրթական ծրագրերն ու մասնագիտական թրեյնինգները, ինչն իրականացվում է բավական կազմակերպված և բարձր մակարդակով: Ինչպես նշեցինք, շարժումը հիմնել է հարյուրավոր դպրոցներ թե՛ Թուրքիայում, թե՛ արտերկրում, այդ թվում՝ սփյուռքի թուրքական համայնքներում:

Կառույցը գործում է անկախ բջիջներով: Այն հիմնված է տարբեր աստիճանի ակտիվիստների հիերարխիայի վրա: Ակտիվիստների առանձին խումբ են, այսպես կոչված, *աբիները՝* ավագ եղբայրները, որոնք զբաղվում են սոցիալական անապահով շրջանակներից երիտասարդների հավաքագրմամբ: Վերջիններս ապահովվում են բնակարանով և կրթություն ստանալու հնարավորությամբ: Գյուլենի ուսումնական ծրագրերի շրջանակներում երիտասարդները ստանում են իսլամական կրթություն: Այդ կադրերն են, որ կարող են օգտագործվել ապագայի իսլամական Թուրքիայում և կարող են հետագայում կարիերա անել իրավական, քաղաքական և կրթական ոլորտներում: Հատկանշական է, որ Գյուլենի շարժման անդամները որոշակի դիրքեր են զբաղեցնում թուրքական պետական կառույցներում, քաղաքական կուսակցություններում, ամենատարբեր կազմակերպություններում, համալսարաններում, սպորտային ակումբներում, և ներկայացված են նույնիսկ անվտանգության ուժերում: Շարժման ֆինանսական աղբյուրները հստակ չեն, և հրապարակայնորեն դրանց մասին չի խոսվում:

1999թ. իր հայտնի քարոզի ժամանակ Ֆեթուլահ Գյուլենը ներկայացրեց Թուրքիայում իսլամականության իր տեսլականը: Գյուլենի համոզմամբ՝ շարժման անդամները պետք է աննկատ ներթափանցեն համակարգ, ճյուղավորումներ տան, մինչև որ հասունանա իշխանության լծակները ձեռք բերելու հարմար պահը: Ըստ Գյուլենի՝ վաղաժամ քայլեր անելը կարող է կործանար լինել այնպես, ինչպես դա եղավ Ալժիրում, Սիրիայում և Եգիպտոսում:

1999-ի քարոզից հետո Գյուլենը, առողջական խնդիրների պատճառաբանությամբ, տեղափոխվում է ԱՄՆ: Նրան մեղադրանք է ներկայացվում Թուրքիայի կառավարման համակարգը փոխելու և իսլամական պետություն ստեղծելու նպատակով անլեգալ կազմակերպություն ստեղծելու մտադրության համար: 2003-ին, երբ արդեն իշխանության էր եկել ԱԶԿ-ն, դատական լսումների ժամանակ որոշվեց հետաձգել Գյուլենի դատավարությունը՝ պայմանով, որ նա առաջիկա հինգ տարիների ընթացքում զերծ մնա արդարադատության հետ խնդիրներ ունենալուց: 2006թ. ԱԶԿ կառավարությունը ձևափոխեց ահաբեկչությանը վերաբերող քրեական օրենսգիրքը, և Գյուլենի գործը կարճվեց:

Ներկայումս Ֆեթուլահ Գյուլենն ապրում է ԱՄՆ-ում (Փենսիլվանիայում) և հենց այդտեղից էլ ղեկավարում է իր միլիոնանոց համայնքը: Նա համարվում է «չափավոր իսլամի» գաղափարախոսության կրող: Նրա կարծիքով՝ իսլամը համատեղելի է արդիականության հետ: Ըստ նրա՝ արևմտյան քաղաքակրթությունից պետք է վերցնել այն, ինչ օգտակար է և ուսանելի, փորձել համադրել դրանք իսլամականի հետ:

Հակառակորդները Գյուլենին մեղադրում են շարիաթական պետություն ստեղծելու ցանկության մեջ: Թուրքիայի աշխարհիկ շրջանակները Ֆեթուլահ Գյուլենի շարժումը համարում են սպառնալիք, քանի որ հետամուտ է իսլամիստական գաղափարների: Իսլամիստական շրջանակների կարծիքով՝ աշխարհիկ իսթեբլիշմենթն օգտագործում է Գյուլենի համայնքը՝ աղճատելու իրենց գաղափարախոսությունը, թուլացնելու իրենց շարժումը: Գյուլենի համոզմամբ՝ իսլամը մեծ մասով պետք է առնչվի հոգևոր, բարոյական, նաև սոցիալական ոլորտներին և միայն փոքր մասով՝ պետությանն ու կառավարությանը: Այս տեսանկյունից՝ նրա համար անընդունելի են Իրանի և Սաուդյան Արաբիայի քաղաքական համակարգերը:

Թուրքիայի քաղաքական շրջանակներում իշխում է այն տեսակետը, թե Ֆեթուլահ Գյուլենն այն ուժն է, որի հետևում կանգնած են շատ իսլամամետ քաղաքական գործիչներ կամ ուժեր, ինչպիսին, օրինակ, ԱԶԿ-ն է: Թուրքական մամուլում տեղ գտած տվյալներով՝ ԱԶԿ-ի մեջ Գյուլենի շարժման համախոհները բավական թիվ են կազմում:

Առանձին ուսումնասիրողների համոզմամբ՝ Գյուլենի շարժումն իսլամական սոցիալական շարժում է, որը ձգտում է միավորել թուրքական և իսլամական արժեքները, իսլամականացնել թուրքական ազգայնական գաղափարախոսությունը, առհասարակ թուրքացնել իսլամը: Գյուլենը համոզված է, որ պետք է վերականգնվի դեռևս Օսմանյան կայսրությունում կրոնի և պետության մեջ գոյություն ունեցող կապը: Նա կողմ է երկրի կառավարման դեմոկրատական ձևին: Նրա կարծիքով՝ դրա լավագույն տարբերակը հանրապետությունն է, որը համատեղելի է իսլամական սկզբունքների հետ:

Ֆեթուլահ Գյուլենը համարվում է թուրքական իսլամի և առհասարակ իսլամական չափավորության գաղափարախոս, ով կողմ է հանդուրժողականությանը, միջդավանական և միջկրոնական երկխոսությանը, Եվրոպայում՝ հատկապես Գերմանիայում, փորձում է նպաստել թուրքերի (կամ մահմեդականների) ինտեգրմանը եվրոպական հանրության մեջ, որի կարևոր բաղադրիչը, ըստ նրա, կրթական ծրագրերն են:

Ստամբուլում Ֆեթուլահ Գյուլենը բազմաթիվ անգամներ հանդիպել է էթնոդավանական փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ: Մեր ունեցած տեղեկություններով՝ Գյուլենը մի քանի անգամ (հրապարակայնորեն) հանդիպել է նաև Պոլսո հայոց պատրիարք Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆյանի հետ: Գյուլենի շարժման հետ որոշակիորեն համագործակցում է նաև «Ակոս» թերթի ներկայիս խմբագիր Էթյուն Մեհճուբյանը:

Ակնհայտ է, որ թե՛ ԱՄՆ-ում և թե՛ Եվրոպայում կան շրջանակներ, որոնք պատրաստ են ֆինանսավորել և աջակցել շարժմանը, շարժման գաղափարախոսությանը, որի հիմքում չափավոր իսլամականության գաղափարներն են: ԱԶԿ քաղաքական հենարանի ուսումնասիրությունն ապացուցում է, որ դրանում առանձին շերտ է կազմում իսլամական մասը, որ նպաստել է ԱԶԿ իշխանության գալուն, ուստի և հետամուտ կլինի, որպեսզի երկիրն ընթանա իսլամականացման որոշակի ծրագրով, որի դրույթները դեռևս այնքան էլ հստակ ու պարզորոշ չեն:

Արաքս Փաշայան
«Նորավանք» հիմնադրամ

ԻՍԼԱՄԱԿԱՆ ԱՐՄԱՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎԱՑՈՒՄ ԼԻԲԱՆԱՆՈՒՄ

Վերջին երկու ամիսներին Լիբանանի հյուսիսում, մասնավորապես՝ Տրիպոլի քաղաքի շրջակայքում գտնվող Նահր ալ-բարիդ պաղեստինյան փախստականների ճամբարի մատույցներում լիբանանյան անվտանգության ուժերի և «Իսլամական ֆաթհ» (արաբերեն՝ «Ֆաթհ ալ-իսլամ») խմբավորման գրոհայինների միջև ընթացող զինված բախումները միջազգային հանրության ուշադրությունը կրկին սևեռեցին այդ երկրում ընթացող զարգացումների վրա: 2006թ. «Իսլամական ֆաթհ» խմբավորման շուրջ 500 գրոհային հաստատվեց Նահր ալ-բարիդ ճամբարում, որտեղ բնակվում էր շուրջ 40 հազ. պաղեստինցի:

1990թ. Լիբանանում երկրորդ քաղաքացիական պատերազմի ավարտից հետո վերոնշյալ ընդհարումները, թերևս, իսլամականների հետ առաջին լուրջ բախումներն էին, որոնք երկրի իշխանություններին կրկին հիշեցրին իսլամական ծայրահեղականների ակտիվացման վտանգի մասին: Վերջիններս համախոհներ ունեն ոչ միայն հիմնականում սուննիաբնակ Տրիպոլիում, այլ նաև երկրի մյուս քաղաքներում ու դրանցում գտնվող պաղեստինյան փախստականների ճամբարներում:

Դեռևս 1969թ. Պաղեստինի ազատագրության կազմակերպության (ՊԱԿ) և լիբանանյան իշխանությունների միջև կնքված Կահիրեի համաձայնագրի համաձայն՝ Լիբանանի տարածքում գտնվող շուրջ 15 պաղեստինյան փախստականների ճամբարների (որոնցում բնակվում է տարբեր տվյալներով 350-450 հազ. փախստական) վերահսկողությունը դե-յուրե հանձնվեց պաղեստինցիներին: 1969թ. ի վեր լիբանանյան իշխանությունները չեն միջամտել այդտեղ ընթացող գործընթացներին, երկրի անվտանգության ուժերը չեն թափանցել ճամբարների տարածք, ինչը լավագույնս օգտագործեցին «Իսլամական ֆաթհի» գրոհայինները:

«Իսլամական ֆաթհի» գործունեությունը դատապարտում են ինչպես Լիբանանի իշխող «Մարտի 14-ի ուժերի» բոլոր ղեկավարները, այնպես էլ սիրիամետ և իրանամետ ընդդիմադիր ճակատի հիմնական ուժերը, որոնք դեռևս մայիսի 21-ին, ի դեմս շիական ծայրահեղական «Հիզբալլահ» շարժման, հայտարարեցին, որ լիբանանյան բանակի դեմ ցանկացած ագրեսիա հարված է՝ ուղղված նաև երկրի կայունությանն ու անվտանգությանը: Նրանք իրենց աջակցությունը հայտնեցին լիբանանյան բանակի գործողություններին:

«Իսլամական ֆաթհ» խմբավորումը սերում է սիրիամետ «Ընդվզող ֆաթհ» (արաբերեն՝ «Ֆաթհ ալ-ինթիֆադա») կազմակերպությունից, որից այն առանձնացավ 2006-ին: Իր հերթին, «Ընդվզող ֆաթհը», որի գլխավոր գրասենյակը գտնվում է Դամասկոսում, մտնում էր «Ֆաթհ» պաղեստինյան կազմակերպության մեջ, որից անջատվեց 1983թ.:

«Իսլամական ֆաթհ» խմբավորման կազմավորման և նրան հովանավորող ուժերի վերաբերյալ շրջանառվում են մի քանի տեսակետներ: Առաջինի համաձայն՝ «Իսլամական ֆաթհը» սերտ կապեր ունի «Ալ-կաիդա» միջազգային ահաբեկչական կազմակերպության հետ, որի կայքէջում էլ հաճախ տեղադրում է իր հայտարարությունները: Խմբավորման ղեկավարությունը, սակայն, հերքում է իր կապը «Ալ-կաիդայի» հետ: Երկրորդ տեսակետի համաձայն, որ կիսում են նաև մի շարք լիբանանյան քաղաքական ուժեր, կազմակերպությունը ստեղծվել է սիրիական հատուկ ծառայությունների աջակցությամբ և գաղտնի կերպով ուղղորդվում է Դամասկոսից: Սակայն տվյալ դեպքում պաշտոնական Բեյրութը ձեռնպահ է մնում Դամասկոսին Լիբանանի ներքին գործերին միջամտելու ուղղակի մեղադրանքներ առաջադրելուց: Իրենց հերթին, սիրիական իշխանությունները կտրականապես հերքում են կազմակերպության հետ առնչությունը:

Մեկ այլ տեսակետի համաձայն, որն առաջ քաշեց *New Yorker-ի* լրագրող Սեյմուր Հերշը, լիբանանյան կառավարությունն ինքն է աջակցել «Ֆաթհ ալ-իսլամի» կազմավորմանը՝ նպատակադրվելով օգտագործել այն Լիբանանում զգալի կշիռ ունեցող ընդդիմադիր «Հիզբալլահ»

խմբավորման դեմ: Այս տեսակետը պաշտպանեց նաև Բեյրութի Ամերիկյան համալսարանի դոկտոր Ֆրանկլին Լեմբը: Վերջինիս պնդմամբ՝ խմբավորման կազմավորման փուլում ԱՄՆ պետքարտուղարի օգնական Դևիդ Վելշը բանակցություններ էր վարում սաուդցիների և Լիբանանի նախկին վարչապետ Ռաֆիկ Հարիրիի որդու՝ Սաադ Հարիրիի հետ, որոնց նպատակն էր համոզել լիբանանյան կառավորությանն աջակցություն ցույց տալ «Ֆաթհ ալ-իսլամին», քանի որ այն հետագայում կարող էր հակակշիռ դառնալ «Հիզբալլահին»:

«Իսլամական ֆաթհ» խմբավորման ղեկավարը պաղեստինցի Շակիր Ալ-Աբսին է, ով սերտ կապեր ունի Սիրիայի հատուկ ծառայությունների հետ: 2004թ. հորդանանյան դատարանը հեռակա կարգով նրան դատապարտեց մահվան՝ ամերիկացի դիվանագետ Լորենս Ֆոլի սպանության կազմակերպման մեղադրանքով: Հորդանանյան իշխանությունները դիմեցին Դամասկոսին՝ Գոլանում ռազմական գործողություն ծրագրելու և զենքի անօրինական վաճառքով զբաղվելու մեղադրանքով Սիրիայում բանտարկված Ալ-Աբսիին հանձնելու խնդրանքով, սակայն սիրիական իշխանությունները մերժեցին: 2005թ. բանտից ազատ արձակվելուց հետո նա մեկնեց Իրաք, որտեղ պայքարում էր կոալիցիոն ուժերի դեմ: 2006թ. Ալ-Աբսին հաստատվեց Լիբանանում, որտեղ մի քանի համախոհների հետ Բեքաայի հովտում հիմնեց ռազմական պատրաստման ճամբար: Այստեղ ռազմական պատրաստություն անցած մարտիկներն էլ 2006թ. համալրեցին «Ֆաթհ ալ-իսլամի» շարքերը:

Լոնդոնյան «Ալ-հայաթ» թերթը, հղում կատարելով ՊԱԿ-ի իր աղբյուրներին, նշում է, որ «Իսլամական ֆաթհը» չի կարող համարվել բացառապես պաղեստինյան կազմակերպություն: «Այն խառը խմբավորում է, որում ներկայացված են ինչպես պաղեստինցիներ, այնպես էլ արաբական այլ երկրների ներկայացուցիչներ, այդ թվում՝ նաև լիբանանցիներ: Կազմակերպության շարքերում պաղեստինցիների քանակը չի գերազանցում 30%-ը: Նրանցից ոմանք ունեն Բաղդադում և Իրաքի այլ շրջաններում ամերիկացիների և շիաների հետ զինված պայքարի փորձ»:

Վերոնշյալ թերթի պնդմամբ՝ կազակերպության իսլամական անվանումը հնարավորություն է տալիս նրա ղեկավարներին հրապարակել ֆեթվաներ, որոնք խմբավորման գրոհայիններին թույլ են տալիս հարձակումներ իրականացնել լիբանանյան բանկերի և միջազգային կազմակերպությունների գրասենյակների վրա: Հարձակումներից ստացված միջոցներն իբրև թե ուղղվում են ինչպես ճամբարների փախստականներին աջակցություն ցույց տալուն, այնպես էլ «անհավատների և իսլամի դրույթներից շեղվածների դեմ ջիհադի իրականացմանը»: Սակայն ավազակային հարձակումներից ստացված միջոցների զգալի մասն ուղղվում էր Լիբանանի հյուսիսում «Իսլամական ֆաթհի» ռազմական հենակետերի ամրապնդմանը:

«Իսլամական ֆաթհի» գրոհայինների և լիբանանյան բանակի միջև ընթացող հակամարտության ողջ ընթացքում խմբավորման ղեկավարությունը փորձում է ստանալ Լիբանանում գործող այլ պաղեստինյան խմբավորումների աջակցությունը, որոնց մեծ մասը, սակայն, իր օժանդակությունն է հայտնել կառավարության գործողություններին: Միակ պաղեստինյան կազմակերպությունը, որն իր աջակցությունը հայտնեց «Ֆաթհ ալ-իսլամին», ծայրահեղական «Դամասկոսի մարտիկներ» (արաբերեն՝«Ջունդ ալ-շամ») խմբավորումն էր: Այն փորձեց «Իսլամական ֆաթհի» և լիբանանյան իշխանությունների միջև հակամարտության սահմաններն ընդլայնել՝ դրանում ներգրավելով նաև Սիդոնի մոտ գտնվող Այն ալ-հիլվե ճամբարը: Հունիսի 3-ին «Ջունդ ալ-շամի» մարտիկները հարձակվեցին Այն ալ-հիլվե ճամբարի մոտ տեղակայված լիբանանյան բանակի պահակակետի վրա: Արդյունքում՝ սպանվեց 2 զինծառայող, վիրավորվեց 5-ը: Գրոհայիններից զոհվեցին 2-ը: Լիբանանյան բանակին հաջողվեց կանխել բախումների հետագա խորացումը:

Հետաքրքրական է, որ երբ մայիսի վերջին լիբանանյան իշխանությունները հայտարարեցին, որ պատրաստվում են գրոհել Նահր ալ-բարիդ ճամբարը, «Հիզբալլահի» ղեկավար Հասան Նասրալլահը լիբանանյան իշխանություններին կոչ արեց ձեռնպահ մնալ գրոհից: Նա զգուշացրեց, որ գրոհի արդյունքում Լիբանանը կարող է ներքաշվել իսլամականների հետ պատերազմի մեջ՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով:

Լիբանանյան «Ալ-նահար» թերթի պնդմամբ՝ «Ֆաթհ ալ-իսլամը» ծրագրել էր «սեպտեմբերի 11-ի սցենարով» ահաբեկչական գործողություններ իրականացնել Բեյրութում արևմտյան

դեսպանատների և զբոսաշրջության կենտրոնների դեմ: Այս տվյալները ստացվել էին «Ֆաթհ ալ-իսլամի» ձերբակալված գրոհայինների հարցաքննությունների արդյունքում: Թերթը նշում էր նաև, որ Տրիպոլիի հյուսիսում հայտնաբերվել է պայթուցիկներով լեցուն պահեստ, որոնք բերվել էին Սիրիայից՝ ահաբեկչական գործողություններ իրականացնելու նպատակով:

Հունիսի սկզբին, գրոհայինների հետ բանակցությունների ձախողման պայմաններում, լիբանանյան իշխանություններն, այնուամենայնիվ, որոշեցին գրոհել Նահր ալ-բարիդ ճամբարը: Արդյունքում՝ սպանվեց նաև «Ֆաթհ ալ-իսլամի» ղեկավարներից մեկը՝ Նաիմ Դիբ Ղալին:

Հունիսի 20-ին լիբանանյան բանակն իր վերահսկողությունը հաստատեց Նահր ալ-բարիդի այսպես կոչված նոր շրջանի նկատմամբ: «Ֆաթհ ալ-իսլամի» գրոհայինները շրջափակման մեջ հայտնվեցին ճամբարի հին շրջանում: Պարտությունից խուսափելու նպատակով իսլամականները միջնորդի դեր ստանձնած պաղեստինյան կազմակերպությունների միջոցով լիբանանյան իշխանություններին տեղեկացրին, որ պատրաստ են բանակցել վերջիններիս հետ:

Կառավարությունը, սակայն, հայտարարեց, որ այլևս հակված չէ բանակցել գրոհայինների հետ և առաջարկեց զենքը վայր դնել ու հանձնվել իրավապահ մարմիններին: Հակառակ դեպքում իշխանությունները մտադիր են պարբերական գրոհների արդյունքում վերջնականապես ոչնչացնել խմբավորման գրոհայիններին:

Հուլիսի 12-ին լիբանանյան բանակը կրկին լայնածավալ գրոհի ենթարկեց Նահր ալ-բարիդի հին շրջանը՝ փորձելով վճռորոշ հարված հասցնել այնտեղ հաստատված գրոհայիններին: Հուլիսի կեսի տվյալներով՝ շուրջ երկու ամիս շարունակվող հակամարտության արդյունքում արդեն իսկ սպանվել է 200 մարդ, որից մոտ 100-ը՝ լիբանանյան բանակի զինվորներ: Ճամբարի ավելի քան 35 հազ. բնակիչ լքել է Նահր ալ-բարիդը:

Թեև լիբանանյան իշխանություններին չհաջողվեց վերջնականապես ճնշել «Ֆաթհ ալ-իսլամի» գրոհայինների գործողությունները, սակայն պաշտոնական Բեյրութը հաջողեց թույլ չտալ ռազմական գործողությունների ընդլայնում՝ նաև պաղեստինյան փախստականների այլ ճամբարներում և խուսափել երկրի պաղեստինյան համայնքի հետ հակասությունների սրումից:

Պաղեստինյան ծայրահեղականների գործողությունները նպատակ են հետապնդում վերադարձնել մինչև 1982թ. իսրայելյան ներխուժումը (որի արդյունքում ՊԱԿ-ն իր կառույցներով դուրս բերվեց Լիբանանից) երկրում պաղեստինցիների ունեցած զգալի կշիռը և կրկին դառնալ Լիբանանի ներքաղաքական կյանքի ակտիվ դերակատար՝ ձգտելով գտնել տարածաշրջանային որևէ ուժի աջակցությունը:

Վերջին շրջանում թեև Սիրիային հաջողվել էր որոշակիորեն բարելավել հարաբերություններն ինչպես Եվրամիության, այնպես էլ ԱՄՆ-ի հետ, իսկ Սիրիայի նախագահ Բաշար Ասադին տվյալ փուլում ձեռնտու չէ լիբանանա-սիրիական հարաբերությունների հերթական սրումը, սակայն բացառված չէ, որ սիրիական որոշ ուժեր շահագրգռված են լիբանանա-սիրիական հարաբերությունների կրկին սրմամբ և հովանավորում են «Իսլամական ֆաթհի» գրոհայիններին:

Պաշտոնական Դամասկոսը շարունակում է հերքել իր կապն ընդհանրապես Լիբանանում ընթացող զարգացումների հետ: Սակայն հետաքրքրական է, որ «Ֆաթհ ալ-իսլամի» գործողությունների ակտիվացումը համընկավ ՄԱԿ Անվտանգության խորհրդի՝ Ռաֆիկ Հարիրիի սպանության գործով միջազգային դատարանի կազմավորման գործընթացին: Բացի այդ, Սիրիան դեմ չէր լինի Լիբանանում (որը Դամասկոսն ավանդաբար համարում է «Մեծ Սիրիայի» անբաժան մասը) ունենալ սիրիամետ ևս մեկ դաշնակից՝ հանձին սուննի ծայրահեղական «Իսլամական ֆաթհ» կազմակերպության:

Լիլիթ Հարությունյան

ԱՄՆ ՀՀՊ ՀԱՄԱԿԱՐԳԸ.
ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

Մինչև 2013թ. ԱՄՆ ՀՀՊ համակարգի ստեղծման ծրագիրը

Մինչև 2013թ. Վաշինգտոնը նախատեսում է հիմնել հակահրթիռային պաշտպանության համակարգ, ըստ Վաշինգտոնի՝ 2015թ. հավանական սպառնալիքների կանխման նպատակով: ԱՄՆ օդուժի հրթիռային պաշտպանության գործակալության *(US Air Forces-Missile Defense Agency)* հրթիռային պաշտպանության ծրագրի համաձայն՝ մինչև 2013թ. Վաշինգտոնի ՀՀՊ համակարգի ստեղծումը ենթադրում է հակառակորդի հրթիռային երեք հիմնական սպառնալիքների խոցում համապատասխան հակահրթիռային զինանոցով *(մանրամասն տե՛ս Հավելված 1)*: Առաջինը *հեռահար սպառնալիքների* խոցումն է, որի համար ՀՀՊ համակարգի տրամադրության տակ են լինելու ցամաքային հենակետային 54 հակահրթիռներ (44-ը տեղակայվելու է ԱՄՆ-ում, 10-ը՝ Լեհաստանում), արագ արձագանքման ռադիոտեղորոշիչ կայանները (Ալյասկա, Կալիֆորնիա, Գրենլանդիա, Մեծ Բրիտանիա, ինչպես նաև Չեխիա):

Երկրորդը *տարածաշրջանային և ասիմետրիկ սպառնալիքների* ոչնչացումն է, երբ ենթադրվող զինանոցի համախումբը թույլ կտա խոցել հակառակորդի մինչև 3 հազ. հեռահարության բալիստիկ հրթիռը հետագծի միջնամասում (SM-3 տեսակի 132, SM-2 տեսակի ավելի քան 100 հրթիռ), հրթիռների անկման փուլում *(THAAD-Terminal Haigh Altitude Area Defense* տեսակի 4 համալիր՝ 96 հակահրթիռով): Երրորդը *հնարավոր և հանկարծահաս սպառնալիքների* խոցումն է, որի համար զինանոցում նախատեսվում են ծովային հենակետային ռադիոտեղորոշիչ կայանի տեղակայում Խաղաղ օվկիանոսում, առաջնային մարտական 2 ռադիոտեղորոշիչ կայան Ճապոնիայում և Կասպյան/Կովկասյան տարածաշրջանում:

Միջազգային ռազմաքաղաքական զարգացումներից այսօր ամենահրատապն, իհարկե, շարունակում է մնալ Արևելյան Եվրոպայում ամերիկյան հակահրթիռային պաշտպանության համակարգերի հնարավոր տեղակայման հարցը, որը և առաջիկա տարիներին ԱՄՆ հակահրթիռային պաշտպանության ազգային ծրագրի մի մասն է: Խոսքը վերաբերում է Իրանի և Հյուսիսային Կորեայի կողմից հնարավոր սպառնալիքներից պաշտպանվելու նպատակով Չեխիայում ռադարային համակարգի և Լեհաստանում 10 հրթիռների տեղակայմանը: Ներկայումս ընթանում է բանակցային փուլը[1]: Վերոնշյալ երկրների (նաև Հունգարիայի) իշխանությունները պատրաստակամություն էին հայտնել ս.թ. փետրվարի կեսերին իրենց երկրներում տեղակայել հակահրթիռային աշխատանքային համալիրներ և ամերիկյան կողմի հետ բանակցություններ էին վարում դրա տեղանքի ընտրության հարցում[2]:

---

[1] Ներկայումս ամերիկյան ՀՀՊ գծով ԱՄՆ-ի հետ համագործակցում են այնպիսի երկրներ, ինչպիսիք են Դանիան, Ֆրանսիան, Գերմանիան, Իտալիան, Նիդեռլանդները, Լեհաստանը, Չեխիան և Ուկրաինան (Եվրոպա), Իսրայելը (Մերձավոր Արևելք), Հնդկաստանը, Ճապոնիան, Թայվանը (Ասիա), Ավստրալիան: Չեխիայում և Լեհաստանում ռադարային ու հրթիռային համակարգերի տեղակայման համար Պենտագոնն ի սկզբանե նախատեսում էր ավելի քան $300 մլն:

[2] Ոչ պաշտոնական տվյալների համաձայն՝ ս.թ. հուլիսին Չեխիայի անվտանգության խորհուրդը որոշում ընդունեց երկրի տարածքում ԱՄՆ ՀՀՊ ռադիոտեղորոշիչ կայանի շահագործման համար տեղանք տրամադրել Բրդիի ռազմական հրաձգարանի շրջանում՝ Պրահայից շուրջ 90կմ դեպի հարավ-արևմուտք:

Հարավկովկասյան վեկտոր

Արևելյան Եվրոպայում ամերիկյան ՀՀՊ տեղակայման շուրջ բանակցություններին զուգահեռ, վերջերս էապես ակտիվացել են ՆԱՏՕ-Հարավային Կովկաս և առանձնապես ՆԱՏՕ-Վրաստան շփումները *(տե՛ս Հավելված 2)*: Հյուսիսատլանտյան դաշինքի հետ Վրաստանի համագործակցության խորացումը 2003թ. «վարդերի հեղափոխությունից» հետո անցումային նշանակություն ունեցավ տարածաշրջանի ռազմաքաղաքական ընթացիկ զարգացումների ու անվտանգության հիմնախնդիրների ընդհանուր տրամաբանության վերափոխման, վերիմաստավորման առումով: Ի տարբերություն հարևան երկու հանրապետությունների, 2003թ. նոյեմբերյան իշխանափոխությունից հետո Վրաստանի ղեկավարությունը բացահայտ հայտարարեց երկրի արտաքին միագիծ քաղաքականություն անցկացնելու և եվրաատլանտյան կառույցներին ինտեգրման մտադրության մասին: Հյուսիսատլանտյան դաշինքն, իր հերթին, ՆԱՏՕ-Հարավային Կովկաս համագործակցության խորացման ու կազմակերպության ռազմաքաղաքական հորիզոնների ընդլայնման հիմնական խաղաթղթերը դրեց վրաստանյան հարթակում՝ շարունակելով համագործակցությունը Հայաստանի և Ադրբեջանի հետ:

Վրացական կողմը ՆԱՏՕ-ի հետ համագործակցության միջոցով նախ փորձում է լուծել երկրի ներքին հիմնախնդիրներն առանց ռուսական կողմի միջամտության՝ վերջինիս հանդեպ եվրաատլանտյան շահագրգիռ ինստիտուտների ճնշումներ բանեցնելու ճանապարհով: Երկրորդ՝ պաշտոնական Թբիլիսին լուրջ հայտ է ներկայացնում ինչպես երկրի, այնպես էլ ողջ տարածաշրջանի եվրաատլանտյան և եվրոպական կառույցներին ինտեգրման հարցում՝ ի հաշիվ ռուսական դիրքերի, ինչն ուղղակիորեն առնչվում է տարածաշրջանում ՌԴ անվտանգության խնդիրներին: Մյուս կողմից՝ Հարավային Կովկասում եվրաատլանտյան ինստիտուտների, տվյալ պարագայում՝ ՆԱՏՕ դիրքերի ընդլայնումն, իր հերթին, կնպաստի ՆԱՏՕ-Ադրբեջան, ՆԱՏՕ-Հայաստան համագործակցության ընդլայնմանը[1]:

Վրաստան-ՆԱՏՕ համագործակցության խորացման և Հարավային Կովկասում ՆԱՏՕ առաջխաղացման գործում առաջին հերթին շահագրգռություն են ցուցաբերում Վաշինգտոնում[2]: Ամերիկյան կողմը Վրաստան-ՆԱՏՕ համագործակցության հարցը դիտարկում է հիմնականում երկու՝ հակառուսական *(ռազմավարական)* և տարածաշրջանային *(համալիր)* վեկտորներով, որոնք շատ հաճախ չունեն բաժանարար գծեր և փոխլրացնում են մեկը մյուսին: Արևելյան Եվրոպայում ընթացող ռազմաքաղաքական զարգացումներին զուգահեռ, Վաշինգտոնը *ՆԱՏՕ-Հարավային Կովկաս ձևաչափի* միջոցով ակտիվացրել է Հարավային Կովկասում և մասնավորապես Վրաստանում ամերիկյան ռադարային կամ ՀՀՊ համակարգերի հնարավոր տեղակայմանն ուղղված *PR-արշավը*[3]: Դեռևս 2007թ. մարտի 1-ին ԱՄՆ ՀՀՊ հարցերով գործակալության ղեկավար, գեներալ-լեյտենանտ Հենրի Օբերինգը հայտարարել էր, որ Միացյալ Նահանգները մտադիր է մինչև 2011թ. Հարավային Կովկասում տեղակայել ՀՀՊ համակարգի շարժական ռադար, որը թույլ կտա հայտնաբերել Իրանի տարածքից հրթիռների արձակումը և փոխանցել այդ տվյալները Չեխիայի համապատասխան ռադիոտեղորոշիչ կայան: Շարժական ռադարը համակարգ է, որը կարող է տեղակայվել ընդամենը մի քանի օրվա ընթացքում:

Ադրբեջանում տեղակայված Գաբալայի ռադիոտեղորոշիչ կայանի (իսկ հետո նաև՝ ՌԴ Արմավիրի մերձակայքում կառուցվող հրթիռարձակման նախազգուշացման կայանի) համատեղ շահագործման հարցի շուրջ ռուս-ամերիկյան բանակցություններից հետո, որոնք, ինչպես և սպասվում էր, դժվար թե լուրջ արդյունքներ տային, Գաբալայի ռադիոտեղորոշիչ կա-

---

[1] Դա ամենևին էլ չի հիմնավորում կազմակերպությանն Ադրբեջանի կամ Հայաստանի հետագա անդամակցության հավանականության հարցը:

[2] 2005թ. ՆԱՏՕ պաշտպանական ընդհանուր ծախսերը հաշվվել են $736.5 մլրդ, որի շուրջ 64.1%-ը ($472.2 մլրդ) կազմել է ԱՄՆ մասնաբաժինը:

[3] Ի տարբերություն Լեհաստանում կամ Չեխիայում ամերիկյան ՀՀՊ համակարգերի տեղակայման, որի իրականացումն ուղղակիորեն առնչվում է եվրոպական մայրցամաքի միասնական անվտանգության համակարգի կայացման Եվրամիության տեսլականներին:

յանի շահագործման հարցերով զբաղվող ամերիկյան փորձագիտական խումբն Ադրբեջանից անմիջապես մեկնեց Վրաստան[1]: Ոչ պաշտոնական տվյալներով՝ փորձագիտական խումբը սեպտեմբերի վերջերից հետազոտություններ էր անցկացնում Աջարիայում նմանատիպ ռադիոտեղորոշիչ կայան հիմնելու ուղղությամբ:

ԶԼՄ-ում այդ օրերին շրջանառվում էին Վրաստան ժամանած մասնագետների կողմից Վրաստանի ավիանավիգացիոն հնարավորությունների ուսումնասիրման և երկրում ամերիկյան ՀՀՊ համակարգի տեխնոլոգիական տարրերի տեղակայման հավանականության մասին լուրերը: Ս.թ. մայիսի 2-ին Վրաստանի ԱԳՆ ղեկավար Գելա Բեժուաշվիլու՝ բրիտանական *«Financial Times»*-ին տված հարցազրույցում պաշտոնյան հաստատել էր *անհրաժեշտության դեպքում* Վրաստանում ՀՀՊ համակարգի տարրերի տեղակայման՝ վրացական կողմի պատրաստակամությունը: Ի դեպ, սևծովյան ափամերձ շրջանում՝ Բաթումի և Փոթիի միջև ընկած հատվածում ռադիոտեղորոշիչ կայանի տեղակայման մտադրության մասին պաշտոնական Թբիլիսին որոշում էր կայացրել 2007թ. օգոստոսին[2]: Նշենք, որ կայանը, որը ձեռք է բերվել Ֆրանսիայում, տեղակայվելու է Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության խորհրդատվության հիման վրա: Նախատեսվում է, որ այն միանալու է Վրաստանի օդային տարածքի վերահսկողության միասնական համակարգին՝ վերահսկելով տարածքային ջրերի վրայով ինքնաթիռների թռիչքները[3]:

Թեև պաշտոնական Վաշինգտոնը շարունակում է հերքել Վրաստանի տարածքում ամերիկյան ՀՀՊ համակարգի կամ ռադիոտեղորոշիչ կայանի տեղակայման հնարավորության հարցը, այնուհանդերձ, վերջին կես տարվա կտրվածքով վրաց-ամերիկյան ռազմական շփումները, Վրաստանում ՆԱՏՕ ակտիվացման տեմպերը թույլ են տալիս վերապահումներով մոտենալ ԱՄՆ պաշտոնական հայտարարություններին: Վերջին մի քանի ամիսներին, ըստ ոչ պաշտոնական աղբյուրների, ՆԱՏՕ-ի թբիլիսյան տեղեկատվական կենտրոնը, Աջարիայում տեղակայված ՆԱՏՕ մասնաճյուղի համագործակցությամբ, լուրջ ուսումնասիրություններ ու տարբեր հասարակական-քաղաքական միջոցառումներ էր իրականացնում երկրի սևծովյան շրջաններում[4]:

Դժվար չէ նկատել, որ Արևելյան Եվրոպայում ամերիկյան ՀՀՊ համակարգերի տեղակայման հարցն անուղղակիորեն առնչվում է Վրաստանում նմանատիպ հակահրթիռային համակարգի ստեղծման շուրջ շրջանառվող վերջին լուրերի հետ: Պատահական չէր նաև ս.թ. օգոստոսի 6-ին Վրաստանի Ցիթելուբանի գյուղի շրջանում հրթիռի հայտնաբերումը, որը պաշտոնական Թբիլիսիի պնդմամբ՝ ռուսական արտադրության *Raduga Kh-58* տեսակի տակտիկական հակառադարային ղեկավարվող հրթիռ էր: Դեպքի առնչությամբ Վրաստանի արտգործնախարար Գ.Բեժուաշվիլին Բրյուսելում հայտարարեց, որ վրացական կողմը ստացել է եվրաատլանտյան կազմակերպության աջակցությունը օդային տարածքի վերաբերյալ տվյալների փոխանակման համակարգին Վրաստանի ներգրավմանը: Հաջորդեց Թբիլիսիի պաշտոնական հաղորդագրությունն օգոստոսի 22-ին Աբխազիայի լեռներում Վրաստանի

---

[1] Գաբալայի ռադիոտեղորոշիչ կայանը հիմնվել է 1985թ. և վերահսկում է 6 հազ. կմ շառավղով տարածք՝ ընդհուպ մինչև հյուսիսաֆրիկյան և հարավարևմտասիական շրջանները: Կայանի ուղղակի տեսանելիության գոտում են Թուրքիան, Պակիստանը, Հնդկաստանը, Իրանն ու Իրաքը, Ավստրալիան, Աֆրիկայի երկրների մեծ մասը, Հնդկական օվկիանոսի կղզիները: Կայանի տեխնիկական պոտենցիալը թույլ է տալիս այն շահագործել մինչև 2012թ.: Ռադիոտեղորոշիչ կայանի համատեղ շահագործման առաջարկությունը հնչեցվել էր ՌԴ նախագահ Պուտինի կողմից՝ Արևելյան Եվրոպայում ամերիկյան ռադար և ՀՀՊ համակարգ չտեղակայելու փոխարեն, սակայն ամերիկյան կողմը չընդունեց առաջարկը:

[2] Վրաստանի տարածքում առկա են մի քանի ռադիոտեղորոշիչ կայաններ, որոնք շահագործվում են դրվել դեռևս նախորդ դարի 80-90-ականներին և չեն համապատասխանում ժամանակակից տեխնոլոգիական պահանջներին:

[3] Կայանը, որի շահագործման համար հատուկ պատրաստվածություն են անցել վրացի մասնագետները, գործում է 450կմ շառավղով:

[4] Ս.թ. հուլիսի վերջին ՆԱՏՕ տեղեկատվական կենտրոն հիմնվեց նաև Կոդորի կիրճում (Վերին Աբխազիա): Պաշտոնական տվյալների համաձայն, առաջիկայում նախատեսվում է հերթական կենտրոնները բացել նաև Սամցխե-Ջավախքում:

սահմանը խախտած ռուսական ինքնաթիռի մասին, որը խփվել է վրացական կողմից, ինչը, սակայն, պաշտոնական Մոսկվան հերքեց: Նույն օրը ՆԱՏՕ անդամ պետությունները, ընդառաջելով վրացական կողմի հայտարարությանը, հանդես եկան Վրաստանի ռադարային տվյալների տրամադրման հնարավորության մասին հայտարարությամբ[1]:

Ինչևէ, բերված փաստարկները, առավել ևս Պենտագոնի Հրթիռային պաշտպանության գործակալության պատրաստած ՀՀՊ համակարգի ծրագիրը, որը նախատեսվում է իրագործել առաջիկա կես տասնամյակի ընթացքում, իրապես հաստատում են, որ Հարավային Կովկասում (ավելի հավանական է՝ Վրաստանում) ամերիկյան ՀՀՊ համակարգի տարրերի տեղակայման հարցը պարզապես ժամանակի խնդիր է և վաղ թե ուշ լուծում է ստանալու: Ինչ վերաբերում է Արևելյան Եվրոպայում, Կովկասում ամերիկյան ՀՀՊ համակարգի ստեղծման շուրջ հակասական հայտարարություններին, կարծիքներին կամ շրջանառվող լուրերին, դրանք ունեն մասամբ քաղաքական, մասամբ նաև՝ *PR-արշավի* ու «պլացդարմային» ուղղվածություն:

Կարեն Վերանյան
«Նորավանք» հիմնադրամ

[1] Վրաստանի, ինչպես և Ալբանիայի, Ուկրաինայի, Ֆինլանդիայի և Մակեդոնիայի հետ «Օդային տարածքում իրադրության մասին ինֆորմացիայի փոխանակման» ՆԱՏՕ ծրագիրը մշակվել էր դեռևս 2003թ., սակայն տեխնիկական խնդիրները վերջնականապես չէին կարգավորվել:

Հավելված 1

ԱՄՆ ՀՀՊ գործող համակարգի կազմը (տեղակայված Հյուսիսային Աֆրիկայում, Արևմտյան Եվրոպայում և Հեռավոր Արևելքում. 2007թ. մարտի 1)

- Արագ արձագանքման 4 ռադիոտեղորոշիչ կայան/*«Cobra Dane»* տեսակի՝ Շեմիա կղզում, Ալեության կղզիներում, *Beale* տեսակի (Կալիֆորնիա), *«Fylingdales»* (Մեծ Բրիտանիա) և *«Thule»* (Գրենլանդիա, Դանիա)։
- Ծովային հենակետային *SBX/Sea-Based X-Band Radar/*ռադիոտեղորոշիչ կայան՝ Ալյասկայի շրջանում (Խաղաղ օվկիանոս)։
- Առաջնային հենակետային *FBX-T/Forward-Based X-Band Radar-Transportable/*ռադիոտեղորոշիչ կայան՝ Հոնսյու կղզում (Ճապոնիա)։
- Ցամաքային հենակետային 16 հակահրթիռ, որից 13-ը՝ Ֆորտ Գրիլիում (Ալյասկա), 2-ը՝ Վանդենբերգի ավիաբազայում (Կալիֆորնիա)։
- *«Aegis»* համակարգի 16 հածանավ և էսկադրոնային ականակիր, ընդհանուր առմամբ 18 *SM-3* /*Standard Missile* տեսակի հակահրթիռներով՝ Խաղաղ օվկիանոս և Միջերկրական ծով։
- *«Patriot» /PAC-3/* տեսակի հակահրթիռային համալիրներ։

<u>Մինչև 2013թ. ԱՄՆ ՀՀՊ համակարգի զինանոցը</u>

Հեռահար սպառնալիքների խոցման՝

- ցամաքային հենակետային 54 հակահրթիռ, 44-ը՝ ԱՄՆ-ում, 10-ը՝ Լեհաստանում,
- արագ արձագանքման 5 ռադիոտեղորոշիչ կայան, տեղակայումը՝ Ալյասկա, Կալիֆորնիա, Գրենլանդիա, Մեծ Բրիտանիա և Չեխիա։

Տարածաշրջանային և ասիմետրիկ սպառնալիքների խոցման՝

- *«Aegis»* տեսակի 18 ռազմանավ,
- *SM-3* տեսակի 132 հակահրթիռ/մինչև 3 հազ. կմ հեռահարության բալիստիկ հրթիռների ոչնչացում հետագծի միջնամասում,
- *«THAAD»/Terminal High Altitude Area Defense/* տեսակի 4 համալիր, ընդհանուր առմամբ 96 հակահրթիռներով/բալիստիկ հրթիռների ոչնչացում նրանց անկման փուլում,
- ծովային հենակետային *SM-2* ավելի քան 100 հակահրթիռ/բալիստիկ հրթիռների ոչնչացում վերջիններիս հետագծի միջնամասում։

Հնարավոր (ներկա) և հանկարծահաս սպառնալիքների խոցման՝

- ծովային հենակետային *SBX 1* ռադիոտեղորոշիչ կայան՝ Խաղաղ օվկիանոս,
- առաջնային մարտական *FDR/Forward-Deployable Radar* 2 ռադիոտեղորոշիչ կայան՝ Ճապոնիա և Կասպյան/Կովկասյան տարածաշրջան,
- հավելյալ առաջնային հենակետային *FBX-T 2* ռադիոտեղորոշիչ կայան։

Հավելված 2

Վրաստան-ՆԱՏՕ համագործակցություն. պատմական ակնարկ

1991թ. ի վեր ՆԱՏՕ և կազմակերպությանը չանդամակցող երկրների (առաջին հերթին՝ Եվրոպա, Կենտրոնական Ասիա և Հարավային Կովկաս) միջև հարաբերությունները զարգանում են «գործընկերային համագործակցության» ձևաչափով[1], որոնք ուղղված են նորանկախ հանրապետությունների անվտանգության ապահովման, ժողովրդավարական կառավարման ամրապնդման, զինված ուժերի արդիականացման և այլ ոլորտների հիմնախնդիրներին:

Վրաստան-ՆԱՏՕ հարաբերությունները սկսվել են 1992թ., երբ Վրաստանն ընդգրկվեց Հյուսիսատլանտյան համագործակցության խորհուրդ (1997թ. այն վերանվանվեց «Եվրաատլանտյան գործընկերության խորհուրդ»), իսկ երկու տարի անց՝ 1994թ., Վրաստանը, ինչպես և իր երկու հարևան հանրապետությունները, միացավ «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրին: 2002թ. Վրաստանը հայտարարում է Հյուսիսատլանտյան դաշինքին անդամակցության և «Անհատական գործընկերության գործողության ծրագրում» (ԱԳԳԾ) ընդգրկվելու երկրի մտադրության մասին: Վրաստանում նոյեմբերյան իշխանափոխությամբ նոր հորիզոններ բացվեցին Վրաստան-ՆԱՏՕ համագործակցության խորացման ուղղությամբ: Արդյունքում՝ 2004թ. (հոկտեմբերի 29) Վրաստանը դառնում է ՆԱՏՕ-ի հետ ԱԳԳԾ իրականացման շուրջ համաձայնության եկած առաջին պետությունը[2]: Թերևս, նաև այդ հանգամանքով էր պայմանավորված 2004թ. ստամբուլյան գագաթաժողովին կազմակերպության ուշադրության բևեռումը Հարավային Կովկասի վրա, որի արդյունքում շատ չանցած տարածաշրջանում նշանակվեց ՆԱՏՕ հատուկ ներկայացուցիչը: Միայն վերջերս՝ 2006թ. սեպտեմբերին ՆԱՏՕ ղեկավարությունն առաջարկեց Վրաստանին սկսել «Ինտենսիվ երկխոսություն» եվրաատլանտյան կազմակերպությանն անդամակցելու երկրի մտադրության շուրջ[3]: Թեև Վրաստան-ՆԱՏՕ համագործակցությունում այս նոր, ավելի բարձր մակարդակը չի երաշխավորում կազմակերպությանը Վրաստանի անդամակցության հարցը, այնուհանդերձ, դա լուրջ հայտ էր Հյուսիսատլանտյան դաշինքին Վրաստանի անդամակցության գործընթացի համատեքստում:

ՆԱՏՕ-ի հետ Վրաստանի համագործակցության խորացման հաջորդ ձևաչափը կամ փուլը վերաբերում է «Անդամակցության գործողությունների ծրագիր»/«Ճանապարհային քարտեզ»-ին (ԱԳԾ), որից հետո երկիրը կարող է դառնալ կազմակերպության լիիրավ անդամ[4]: Կազմակերպության հաջորդ գագաթաժողովում, որը նախատեսվում է 2008թ., ըստ ամենայնի նոր հեռանկարներ կբացվեն ՆԱՏՕ-ին անդամակցել ձգտող կամ այդ ճանապարհով ընթացող երկրների, այդ թվում՝ Վրաստանի համար:

---

[1] Հյուսիսատլանտյան դաշինքի նոր ռազմավարական հայեցակարգի (1999թ., Վաշինգտոն) համաձայն, գործընկերային հարաբերությունների հաստատումը համարվում է ՆԱՏՕ-ի առջև ծառացած անվտանգության ապահովման կարևորագույն հիմնախնդիրներից մեկը:

[2] Ադրբեջանը համաձայնեցրել է ԱԳԳԾ-ն 2005թ. մայիսի 27-ին, Հայաստանը՝ 2005թ. դեկտեմբերի 16-ին:

[3] «Ինտենսիվ երկխոսություն» (խորացված երկխոսություն) ձևաչափը ստեղծվել է 1997թ. ՆԱՏՕ մադրիդյան գագաթաժողովում:

[4] Երեք երկրներ՝ Ալբանիան, Խորվաթիան և Մակեդոնիան, որոնք ՆԱՏՕ «Անդամակցության գործողությունների ծրագրի» անդամ են, նույնպես կազմակերպությանն անդամակցելու հայտ են ներկայացրել: